




ԶՄԻԱԾԻՆ



196



ԼԱ
ՏԱՐԻ





ԷԶՄԻԱԾԻՆ




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՌՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿԵՂԻՆ

1974





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը 1975 թվականը հորեղանակա՞ն տարի հայտարարելու և Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի պատմության փառքի հիշատակը ոգեկոչելու առթիվ	3
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Փարիզի սրբապետական կարդինալ Ֆրանսուա Մարտինի՝ Ֆրանսիայի հանրապետության նախագահ Ժորժ Պոմպիդուի մահվան առթիվ, և ստացված պատասխանը	6
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Ալբրուրն արքեպիսկոպոս Մանուկյանին՝ Ֆրանսիայի հանրապետության նախագահ Ժորժ Պոմպիդուի մահվան առթիվ	7
Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում	8
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	10
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական կրեք Աթոռներին, թեմակալ ըույր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	13
Ընթերցումներ Ավետարանից	14
Հայրապետական հանդիսավոր և պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ	16
Իկարիյան եղևոնի 58-րդ տարեդարձի առթիվ և պատարագ և քարոզ Մայր տաճարում	17
ԻՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	21
ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՑԱՆ—Լույս տուր, Տեր, աչաց իմոց	23
ՀԵՆՐԻԿ ԲԱՅԵՉԻՆՑԱՆ—Հովհաննես կաթողիկոսի «Հայոց պատմության» ձևագրերը և հրատարակությունները	25
ԶԵՓՅՈՒՌ ԹԱՌԱՑԱՆ—Էջմիածնի Մայր տաճարի թանգարանի սև վարագույրը	28
ԵՐՎԱՆԻ ՄԵԼՔՈՆՑԱՆ—Դավիթ Զևթունցու չափածո տոմարը	32
Լուրեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից	38
Լուրեր Եկեղեցիների համաշխարհային խորհրդից	45
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 8/IV 1974 թ.: Ատորագրված է տպագրության 15/V 1974 թ.:

Տպագրական 4 մամ., թուղթ 60×84 1/2, պատվեր 218

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Յ. Յ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱՍՋԵԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԳԱԿԸ
1975 ԹՎԱԿԱՆԸ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ
ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԼԻԿՅԱՆ
ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԱՌՔԻ ՀԻՇԱՏԱԿԸ
ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ԱՌԹԻՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂԶՈՐՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՑ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻԾԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ
ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹՍՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՏՈՆԷԻՑ
ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Փրկել զմեզ ի քերամոյ առիժուց, ազատել զգերհալսն ի
տանէ կապամաց և դարձուցանել զամենեւեւ յաշխարհն Բայ-
րենի»:

Ս. Ներսէս Շնորհալի

Հայաստանեայց եկեղեցու և ժողովրդի քաղմադարեան պատմութիւնը
սրտաշարժ դիցազմերգութիւնն է նրա ապրելու սրբազան կրքի ու նրա
ստեղծարար ուժերի: Յանախ, նոյնիսկ արտաքին մահացու հարուածների
տակ, վերջնական փլուզում թուացող վախճանը, դարձել է նոր կեանքի

սկիզբ, որով հայ ժողովուրդը տառապանքի ազնի լուսապատկը ճակատին շարունակել է գոյատևել, մարտնչել ու յառնել իր իսկ անբախտելիքը:

Այսպիսին է եղել մեր եկեղեցւոյ պատմութեան նաեւ կիլիկեան Հայաստանի շրջանը, երբ այնտեղ է փոխադրուել ու գործել անելի քան երեք դար մեր եկեղեցու կենտրոնն էլ՝ Ամենայն Հայոց հայրապետական Մայր Աթոռը:

Ժողովուրդների պատմութեան մէջ, գրեթէ եզակի երեւոյթ է, որ անդունդի եզրին հասած մի փոքր ազգութիւն, իր պատմական հայրենիքից հեռու, մի ալ իր հողամասի վրայ, կարողացել է հիմնել մի նոր ազգային իշխանութիւն, ուր և փոխադրելով իր եկեղեցու գերագոյն կենտրոնը, դարեր շարունակ գոյատևել, գործել ու զարգացրել է իր հոգեւոր և մշակութային կեանքը, ապա վերահառնալու համար իր պատմական հողամասի վրայ, նոր վերածնունդի տեսիլքով առնուց:

Այսպէս է որ Բագրատունեաց Հայաստանի անկումից յետոյ, մեր եկեղեցւոյ պատմութեան կիլիկեան ժամանակաշրջանը, մինչեւ 1441 թուականը հանդիսացել է մի ճշմարիտ՝ հոգեւոր ու մշակութային վերածնունդ:

Արեւմուտքից ու ապա արեւելքից կրած ահաւոր հարուածներից, հոգեւորքի մէջ տուայտող հայ եկեղեցու և ժողովրդի համար, փրկութիւն է դարձել Կիլիկիան, որը կամրջել է մեր թուարկութեան հայոց պատմութեան առաջին հազարամեակը և յետագայ դարերի զարթոնքի ու ապա մերօրեայ վերածնունդի դարաշրջանը:

Կիլիկեան վերածննդեան երեք հարիւր տարիները հանդիսացել են մի քախտորոշ ժամանակաշրջան մեր եկեղեցու և ժողովրդի փոթորկալոյց պատմութեան ճանապարհի վրայ:

Յիրաւի, Բագրատունեաց Հայաստանի անկումից յետոյ, կիլիկեան շրջանըն է որ քացել է մեր պատմութեան «Յուսոյ դռները» և ապա երեք դար շարունակ փառքի էջեր արձաձագրելուց յետոյ նոր «Յուսոյ դռների» ժառանգութիւնը փոխանցել է մեր եկեղեցւոյն ու ժողովրդին, որը այս անգամ բուն Հայաստանի հողի վրայ, պիտի շարունակէր իր պատմական առաքելութիւնը, մանաւանդ հայրապետական Մայր Աթոռի 1441-ին Սսից ս. Էջմիածին փոխադրուելուց յետոյ:

Կիլիկեան դարաշրջանը ոչ միայն նոր կեանքի է կոչել մայր երկրի տարածքի վրայ շնչառելի վիճակի հասած հայ եկեղեցին ու հայրապետական Աթոռը, հայ մշակոյթն ու դպրութիւնը, ազատ ու ինքնիշխան ապրելու ազգային գիտակցութիւնը, այլեւ առաւել ամրապնդել է դրանք, ու անկողնէն ճորտ արծէքներով հարստացրել է հայ ստեղծարար հոգու ու մտքի գանձարանը:

Արդարեւ, կիլիկեան շրջանը նոր ու ինքնատիպ յօտք է ասել և նոր բարձունքներ է նուաճել հայ եկեղեցու աստուածաբանական մտածողութեան, փիլիսոփայութեան ու գրականութեան, օրէնսդրութեան ու գիտութեան, գրչութեան ու մանրանկարչութեան պատմական զարգացման ու ծաղկման ճանապարհի վրայ:

Մեր պատմութեան երկնակամարի վրայ՝ հինգերորդ դարի հայոց ոսկեդարին, կիլիկեան շրջանն է որ պատասխանել է՝ հայոց արծաթեայ դարը կերտելով: Ոսկեդարից ութ հարիւր տարիներ յետոյ, արծաթեայ դարով՝ կոթողուել է հայ եկեղեցու և մշակոյթի երկրորդ սինը: Եւ այդ երկու սինների վրայ է յենուել ու յենում է՝ հայ ոգեկանութեան բոլոր ժամանակների յաղթական կամարը:

Եւ անելին տակաւին, մեր հաւատաւոր ու արիական ժողովուրդը, իր պատմութեան կիլիկեան փառքի յիշատակը իր սրտում ամուր ծրարած, արթուն գիտակցութեամբ սպասել է «Յուսոյ դռների» առաջ, մինչեւ նրանք

քացուել են մեր ժամանակաշրջանում, մեր մայր հողամասի վրայ, արդի մեր պերճ Հայաստանի ծնունդով, եղբայրացած ժողովուրդների մեծ ընտանիքում, խաղաղության, անվտանգության ու անճախընթաց յառաջադիմության պայմանների մեջ:

Չի կարելի խոր յուզումով չլինել Ստեփանոս Օրբելեանի մարգարէաշունչ «ողորձ» տասնեւորսերորդ դարի սեմին, երբ նա ողջում էր քուն Հայաստանի ժողովրդի ու հայոց եկեղեցիների «խորշակահար» վիճակը, քայքայ երազում էր նրանց վերականգնումը մայր երկրի վրայ:

**«Կանգնե՛ Աստուած զԱթոռ [Հայկեան]... նոր գարդարե փառքըն հին...
Տայ մեզ գոչել ձայնի ուժգին, վերջինս է մեծ քան զառաջին»:**

Այսօր, երբ մեր անցեալի հին մագաղաթները յուշում են մեզ՝ վեց հարիւրամեակը հայոց կիլիկեան շրջանի վերջաւորութեան (1975—1975), մեր սուրբ եկեղեցու և Մայր Աթոռիս գիտակցութեան առաջ յառնում է մեծ յիշատակը այդ ժամանակաշրջանի, և փառաւոր ժառանգութիւնը, որ նա ընծայ է թողել մեզ, իր երեք հարիւր և ասելի տարիների կենսունակ գոյատեւմամբ, հերոսական մարտնչումներով և հոգեւոր մեծարժէք իրագործումներով:

Որով, այս Մեր կոնդակաւ, հրաւեր ենք կարդում՝ որ 1975 տարին նուիրուի հայ եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետութեան կիլիկեան շրջանի յիշատակին, որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում տեղի ունենան գոհաբանական մաղթանքի արարողութիւններ, ու կենդանի խօսքով ոգեկոչուեն, մանաւանդ այն մեծանուն հայրապետներն ու վարդապետները, հոգեւոր մշակներն ու գիտութեան և արուեստի վարպետները, որոնք կերտել են հայ ոգեկանութեան արծաթեայ դարը: Ջերմապէս յանձնարարում ենք, որ այս նուիրական յիշատակի պանծացմանը մասնակցեն նաև մեր եկեղեցական-մշակութային կազմակերպութիւնները և հայ՝ մամուլը, կիլիկեան շրջանի հոգեւոր մշակոյթի արժէքները լայնօրէն ծանօթացնելու համար հայ նոր սերունդին և ալլազգի ժողովուրդներին, հայերէն և օտար լեզուներով հրատարակութիւններով:

Յարգանք ու պատիւ հայ եկեղեցու և ժողովրդի հոգու մշտանորոգ ուժերին:

Յարգանք ու պատիւ հայ եկեղեցու և ժողովրդի լուսափառ պատմութեանը և մեր օրերի հայրենական պայծառ վերածննդեան:

Կարգադրող

**ՍԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 18-ն մարտի
1974 փրկական տմի,
և ի տոմարիս Ռայոյ ՌՆԻԳ,
ի մայրաղանս սրբոյ Էջմիածնի
ՀՄԻ. 787



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐԸ ՓԱՐԻՋԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ
ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԺՈՐԺ ՊՈՄՊԻԴՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹՎ,
ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Փարիզ

Եղբայրորեն կանանակցինք ձեր եկեղեցվո ու ժողովուրդի մեծ սուգին
և հանուն հայ եկեղեցվո կիսնդրենք ընդունիլ Մեր խորագրաց ցավակցու-
թյունները ձեր երկրի կրած մեծ կորուստին տխուր առիթով:

Մենք կաղոթենք, որ Տերը հավերժական լուսի աշխարհի մեջ անթառամ
պահպանե հիշատակը հանգուցյալ նախագահ Ժորժ Պոմպիդուի, որ արժա-
նավոր մեկ զավակը եղավ Ֆրանսական հայրենիքին և մեր ժամանակներու
խաղաղասեր մեծագույն պետական մարդոց մի:

Թող Աստված իր օրհնության ներքև միշտ ծաղկյալ պահպանե Մեծն
Ֆրանսան:

ՎԱՋԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4-ը ապրիլի 1874 թ.,
Ա. Էջմիածին

Էջմիածին

Խորապես շնորհակալ եմ և զգացված Ֆրանսիայի հանրապետության
նախագահի մահվան առթիվ Ձերդ Արքության արտահայտած զգացումների
համար:

Հոգեհանգստյան աղբյուրության ժամանակ Ֆրանսիայի բոլոր հավա-
տացյալների հետ միասին աղոթեցի, որպեսզի Տերը հոգվո հանգստություն
պարգևի մեր Պետության Ղեկավարին:

ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻ
Արքեպիսկոպոս Փարիզի

5-ը ապրիլի 1874 թ.,
Փարիզ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐԸ ԱՐԵՎՄՏՑԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ՍԵՐՈՎԱԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԺՈՐԺ
ՊՈՄՊԻԴՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Փարիզ

Սուրբ Էջմիածնի խորանին առջև տխուր սրտով կադրեցեք հոգվույն
համար Ֆրանսայի հանրապետության նախագահ հանգուցյալ Ժորժ Պոմպի-
դուի, որ իբրև պետական հայրենամկեր փայլուն գործիչ և աշխարհի խաղա-
ղության հզոր պաշտպան պիտի հիշվի հավերժական Ֆրանսայի պատմու-
թյան մեջ փառավոր անուններու կողքին:

Ձեր մեծ նախագահը ազնիվ բարեկամն էր նաև մեր Մայր եկեղեցիին
և հայ ժողովուրդին:

Հարգանք և օրհնություն իր մեծ վաստակին և իր արդար հիշատակին:

Աստված թող հավետ փառավոր ու ծաղկյալ պահե ազատատենչ ու խա-
ղաղասեր Ֆրանսան:

Հանուն հայ եկեղեցվո Մեր խորագրաց ցավակցությունը հաճեցեք հայտ-
նել ձեր երկրի բարձր իշխանությանց:

ՎԱՋԳԵՆ Ա.

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1-ը ասյրիյի 1874 թ.,

Ս. Էջմիածին





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(1974 թ. ապրիլի 14)

«Իր մատնեցաւ վասն յանցանաց մերոց և յարեսաւ վասն զմեզ արդարա-
ցոյցանելոյ» (Հոով. Դ 25):

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր,

Այսօր գարուն է և Զատիկ: Այսօր տոնն է սուրբ Հարության:

Այսօր մարդկային աշխարհի, մարդկանց սպասումների ու որոնումների հորիզոնի վրա վերստին ծագում է լույսը Քրիստոսի հարության: Լույս, որ ճեղքում է խավարը մահվան և ճանապարհ բացում դեպի փրկությունը մեր հոգիների: Զի հարությունը Քրիստոսի հաղթանակն է ընդդեմ մեղքի, որով և՛ ընդդեմ մահվան: Այո, հարության հաղթանակով պարտվեց մեղքը և նրա պտուղը հանդիսացող՝ մահը:

Պողոս առաքյալն էլ է վկայում, թե Քրիստոս մեր հանցանքների համար իսա՛ թարձրացավ, մահվան բաժակը ըմպեց և ապա հարյալ, որպեսզի մեզ բուրդիս, բոլոր մարդկանց արդարացնի:

Տեսնում ենք ուրեմն ահա, որ Հիսուս մարդկային աշխարհին փրկության ճանապարհը բացելու համար, իր իսկ կյանքը զոհելով, դատապարտեց, պարտության մատնեց մարդկության վրա ծանրացող մեղքերը բոլոր՝ կեղծիքն ու անարդարությունը, բռնությունն ու կեղեքումը, նախանձն ու ատելու-
թյունը, ազատությունն ու հափշտակությունը, որոնք ընկերային կյանքում ծնունդ են տալիս բազում ողբերգությունների և նույնիսկ երբեմն ոճիրների, իսկ ազգամիջյան հարաբերություններում՝ պատերազմների, ավերումների և նույնիսկ ցեղապանությունների:

Ամբողջապես և ուղիղ հասկանալու համար մեր Փրկչի՝ Հիսուսի բուն առաքելությունը մարդկային աշխարհում, հարկ է կրկին ու կրկին անգամ միջել Նրա կրակե խոսքերը, որով դատապարտում է Նա՝ մեղքի գործիք դարձած կեղծավոր դպիրներին և փարիսեցիներին, ու ապա Նրա լերան քա-
րոզը, որով երանի է տալիս հեզ և խոնարհ մարդկանց, արդարության ծա-
րավի մարդկանց, խաղաղարար մարդկանց:

Ահա բարոյականի բարձրագույն ըմբռնումը, որ Հիսուս պարզեց աշ-
խարհին, բոլոր ազգերին, բոլոր մամանակներին, որպես հոգեկան սնունդ և
լաստ մարդկանց հոգիների սզելուցման ու փրկության:

Փա՛ռք հարության Փրկչին մերո Հիսուսի Քրիստոսի:

Սիրեցյալ հոգևոր զավակներ Մեր, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, մեր Մայր եկեղեցին, Հայաստանյայց առաքելական եկեղեցին, այս հավատքով և այս դավանանքով է, որ դարեր ու դարեր շարունակ իր սուրբ հովանու ներքև անվտանգ պահեց, պահպանեց և դաստիարակեց մեր ազգը:

Հիսուսի հարության հավատքով մեր Մայր եկեղեցին դարձավ հարության եկեղեցի, մեր ժողովուրդը՝ հարության ժողովուրդ, գուցե ավելի քան ուրիշ առավել բախտավոր ազգեր, որոնց չվիճակվեց այն ահավոր ճակատագիրը, որ մեր ժողովրդի պատմական կյանքի բաժինը եղավ այս աշխարհում, մինչև մեր դարի առաջին երկու տասնամյակները:

Ամեն անգամ, երբ հայ քրիստոնյան, Ավագ շաբաթվա օրերին, Հիսուսի խաչի ճանապարհի ողբերգությունն է ապրում և հոգեպես ուղեկցում Աստվածորդուն մինչև Գողգոթա և մինչև գերեզման, նա չի կարող մոռանալ, չի կարող չվերապրել մեր մարտիրոս ժողովրդի խաչի ճանապարհը, նա չի կարող մոռանալ անհայտ գերեզմանները երկու միլիոն իր ճահատակների:

Սակայն, ով աստվածային արդարություն, հայ ժողովրդի լույս հավատքը մի անգամ ևս ճշմարտվեց, թե քրիստոնեական մահը ճանապարհ է դեպի փրկություն, դեպի հարություն, դեպի հավերժություն: Հիսուսի սուրբ հարության տեսիլքը իր սրտում, հայ հավատավոր ժողովուրդը մի անգամ ևս **ճեղքեց** մահվան խավարը և հասավ վերջապես մի լույս աշխարհի ափին և տեսավ արևածագը իր նոր կյանքի, վերականգնումովը կործանված իր ստականության, վերածաղկումովը իր ազգային մշակույթի, ամբողջական վերակառուցումովը իր մայր հայրենիքի, եղբայրական ազգությունների այն մեծ ընտանիքում, որ ավելի քան կես դար է, ահա, եղավ ու մնում է միակ գրավականը մեր ժողովրդի անվտանգության, խաղաղության և ապագա զարգացման:

Եթե քրիստոնեական հավատքը խառնված է հարության գաղափարի վրա, արդար է, որ սուրբ Զատիկի այս առավոտյան, երբ փառաբանում ենք հրաշափառ Հարությունը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, չմոռանանք հիշել նաև մեր եկեղեցու ու ժողովրդի խաչի ճամփան և մանավանդ գրեթե հրաշքի համազոր մեր օրերի նրանց վերածնունդը: Մարմին ու հոգի առած, ապրող ու շնչող, աճող ու ծաղկող պայծառ իրականությունն է այդ մեր արդի ամենայն հայոց Մայր Հայաստանի:

Սուրբ Հարության ավետիսով ողջունում ենք ձեզ և հղում բոլորիդ Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից:

«Ձեզ և մեզ մեծ անտիս» Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Ամեն:





Ժողովի ՀՐԱՇԱԺԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
 ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
 ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ,
 Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
 ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ
 ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
 ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
 ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
 Կոստանդնուպոլսի հուճաք տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
 ԳԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
 Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
 ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
 Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի հուճաք ուղղափառ եկեղեցու
 Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
 Երուսաղեմի հուճաք ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),
 Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),
 Անտիոքի և Համայն Արևելքի հուճաք ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
 Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
 Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
 ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),
 Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
 ԲԱՍԻԼԻՈՍ ՕԳԵՆ Ա-ԻՆ (Բոթայամ),
 Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
 ԴԱՎԻԹ Ե-ԻՆ (Թբիլիսի),

Ռուսին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 Ժ Ո Ւ Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),
 Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 Մ Ա Ջ Ս Ի Մ Ի Ն (Սոֆիա),
 Անտիոքի և Համայն Արևելքի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն
 կարդինալ Պ Ո Ւ Մ Ե Ո Ւ Ծ Ի Ի Ն (Բեյրութ),
 Անտիոքի և Համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք,
 Նորին Սրբություն Մ Ա Ջ Ս Ի Մ Ո Ս Ե Հ Ա Ջ Ի Մ Ի Ն (Դամասկոս),
 Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 Ի Փ Ն Ա Տ Ի Ո Ս Ա Ն Տ Ո Ւ Ա Ն Հ Ա Յ Ե Կ Բ-ԻՆ (Բեյրութ),
 Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
 միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Մ Ա Յ Ջ Լ Ռ Ե Մ Ջ Ի Ի Ն
 (Լոնդոն),
 Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 Ս Ե Ր Ա Ֆ Ի Մ Ի Ն (Աթենք),
 Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
 Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
 Վարշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 Վ Ա Ս Ի Լ Ի Ի Ն (Վարշավա),
 Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ,
 Նորին Գերաշնորհություն Գ Ո Ր Ո Ֆ Ե Ի Ն (Պրագա),
 Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
 Ի Փ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Ջ Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բեյրութ),
 Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
 Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),
 Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
 դոկտ. Ֆ Ի Լ Ի Պ Փ Ո Թ Ը Ր Ի Ն (Ժնև),
 Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
 կարդինալ Ժ Ա Ն Վ Ի Լ Լ Ո Յ Ի Ն (Վատիկան),
 Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ Ֆ Ր Ա Ն Յ Կ Յ Ո Ն Ի Փ Ի Ն (Վիեննա),
 Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ Ֆ Ր Ա Ն Ս Ո Ւ Ա Մ Ա Ր Տ Ի Ի Ն (Փարիզ),
 Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ,
 Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ Ա Ն Վ Ի Լ Լ Բ Ր Ա Ն Փ Ս Ի Ն
 (Վատիկան),
 Մարսելի Արքեպիսկոպոս, Գերաշնորհ
 Ռ Ո Ժ Ե Է Զ Ե Փ Ա Ր Ա Յ Ի Ն (Մարսել),
 Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն Յ. Պ. Մ Ա Տ Ո Ւ Լ Ի Ս Ի Ն (Ռիգա),
 Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն Ա Լ Ֆ Ր Ե Փ Տ Ո Ո Մ Ի Ն Փ Ի Ն (Տալլին),
 Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
 Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ն Յ Ա Ն Ի Ն (Բեյրութ),
 Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
 Է Ր Մ Ի Ն Ի Ո Ռ Ո Ն Կ Ա Ր Ի Ի Ն (Երուսաղեմ),
 Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
 դոկտ. Կ Ա Ր Ո Լ Ի Տ Ո Թ Ի Ն (Պրագա),

իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ

ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),

Մխիթարյան ուխտի արքանայր, Գերապայծառ հայր

ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վեհետիկ),

Մխիթարյան ուխտի արքանայր Գերապայծառ հայր

ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեհնա),

Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել),

Վերապատվելի ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ (Նյու-Յորք):

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Երբ երկնքի բարձունքներեն մեր Տիրոջ և Փրկչի հարության ավետիսը այսօր ալ կհասնի մեր հուսացյալ հոգիներուն, Մեզի համար շատ քաղցր է բերկրյալ սրտով ողջունել Ձեզ եղբայրական սիրով և ջերմ աղոթքով, որ սուրբ Հարության շնորհները ազատ ու առատ ճառագայթեն աշխարհի վրա և մարդիկ ու ազգություններ այդ լույսի ջերմությամբ եղբայրանան, համեարաշխին ու իրարու բարին կամեցող գործակիցներ դառնան՝ տեական խաղաղության սրբազան մի դաշինքով միացած:

Աղոթող ենք նաև, որ Տերը պարգևե Ձերդ Սրբության տոկուն և քաջ առողջություն և մեա Ձեզի միշտ օգնական Ձեր սուրբ առաքելության ճանապարհին՝ ի փառս ձեր պատմական մեծ եկեղեցիին, որ մեր օրերու աշխարհի մեջ հզորագույն մեկ սյունը կհանդիսանա համայն քրիստոնեության:

Հաճեցեք ընդունիլ Մեր եղբայրական հարգալիք սերը ի Քրիստոս:

«Աստուած յուսոյ լի արասցե զձեզ ամենայն խնդությամբ և խաղաղութեամբ, առանելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հոով. ԺԵ 18):

ՎԱԶԳԵՆ Ա

ԵԱՅՐԱԿՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

II. ԷԶՄԻԱՅԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի Ռաշափառ և սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանում Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾԵՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ
ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ,
ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սուրբ Զատիկի այս առաւելտուն թերկրյալ սրտով կողջունենք զձեզ այս
քարի յուրով և կմաղթենք, որ սուրբ Հարության լույսը ձեզ պարզեն մշտանո-
րոգ ոգեկան եռանդ ու կատարյալ առողջություն մարմնո, որպեսզի նույն
նվիրումով շարունակեք ձեր առաքելությունը՝ ի լիակատար կենսագործումն
աստվածասեր ուխտիդ հոգեշեն ու ազգանվեր ծրագիրներուն:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն կհղենք ձեզ Մեր եղբայրա-
կան սերն ու զնահատանքը և ուխտիդ հոգեռանդ միաբաններուն՝ Մեր հայ-
րապետական օրհնությունը:

«Աստուած յուսով լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղու-
թեամբ, առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 18):

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԱՏՈՆ

•
•

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց
Վեհափառ Հայրապետի անուշով ստացվեցին ամենաջերմ և հարգալից
զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակ-
ներ մեր Ավիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտաառնմանի
և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշա-
կութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանա-
զան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորու-
թյուններից:





ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

Հիսուսի թաղումը

Եվ ահա Հովսեփ անուճով մի մարդ [կար] հրեաների Արիմաթե քաղաքից: [Նա] խորհրդական էր, բարեգործ և արդար մի մարդ (սա չէր միաբանել նրանց մտադրություններին ու գործերին): Եվ ինքըն էլ էր սպասում Աստուծո արքայությանը: Սա Պիղատոսի մոտ գալով՝ ուզեց Հիսուսի մարմինը: Եվ նրան իջեցնելով՝ փաթաթեց պատանքով ու դրեց վիմափոր գերեզմանի մեջ, որտեղ բնավ ոչ ոք չէր դրված: Եվ օրը ուրաթ էր, ու լուսամուկ էր շաքաթը:

Եվ նրա [Հովսեփի] ետևից գնում էին կանայք, որոնք Գալիլիայից էին եկել [Հիսուսի] հետ. նրանք տեսան գերեզմանը, և թե ինչպես նրա մարմինը [այնտեղ] դրվեց: Վերադարձան, խնկեր և յուղեր պատրաստեցին ու շաքաթ օրը, պատվիրանի համաձայն, հանգիստ արեցին:

Թափուր գերեզմանը և Հիսուսի հարությունը

Բայց շաքաթվա առաջին (կիրակի) օրը, առավոտյան շատ վաղ գերեզման եկան՝ քերելով իրենց պատրաստած խնկերը. նրանց հետ [կային] և ուրիշ կանայք: Եվ քարը գերեզմանից գլորած գտան ու ներս մտնելով՝ Տեր Հիսուսի մարմինը չգտան: Եվ մինչ նրանք զարմացած էին բանի վրա, ահա լուսավոր զգեստներով երկու մարդիկ հասան նրանց մոտ: Եվ երբ [կանայք] զարհուրեցին ու իրենց երեսը գետին խռնարհեցրին, նրանք [մարդիկ] ասացին. «Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտրում: Այստեղ չէ, այլ՝ հարյալ: Հիշեցե՛ք՝ ինչպես խոսեց նա ձեզ հետ, երբ Գալիլիայում էր.

ասում էր, թե պետք է, որ մարդու Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի, խաչվի և երրորդ օրը հարություն առնի»: Եվ նրանք հիշեցին նրա խոսքերը: Եվ [գերեզմանից] վերադարձան ու պատմեցին այս ամենը Տասնմեկին (առաքյալներին) և բոլոր մյուսներին: Եվ Մարիամ Մագդալենացին, Հովհաննան, Հակոբի [մայրը] Մարիամը և Տրանց հետ ուրիշներ էին, որ այս բաները պատմեցին առաքյալներին: Բայց նրանց խոսքերը բարբաջանք թվացին, և չէին հավատում նրանց: Միայն Պետրոսը վեր կացավ և վազեց դեպի գերեզման, նայեց ու տեսավ, որ կտավները միայն կային: Եվ գնաց՝ մտքում զարմացած, թե ինչ էր եղել:

• •

Վերստին Գալիլիայում

Սրանից հետո Հիսուսը դարձյալ իրեն հայտնեց իր աշակերտներին Տիրերիայի ծովեզերքի մոտ և հայտնեց այսպես. միասին էին Սիմոն Պետրոսը, Թովմասը՝ Երկվորյակ կոչվածը, Նաթանայելը, որ Գալիլիայի Կանա [քաղաք]ից էր, Ջեբեդեոսի որդիները և աշակերտներից ուրիշ երկու հոգի: Սիմոն Պետրոսը նրանց ասաց. «Գրում եմ ձուկ որսալու»: Նրան ասացին. «Մենք էլ ենք գալիս քեզ հետ»: Գնացին և մալակը մտան, և այդ գիշեր ոչինչ չբռնեցին: Երբ առավոտ եղավ, Հիսուսը կանգնած էր ծովի եզերքին. բայց աշակերտները չիմացան, որ Հիսուսն է: Հիսուսը նրանց ասաց. «Տղաներ, ուտելու բան չունե՞ք»: Նրան պատասխանեցին ու ասացին՝ ո՛չ: Նրանց ասաց. «Ուռկանը զցեցե՛ք՝ մալակի աջ կողմը և կգտնեք»: Գցեցին. և ձկների

յազմությունից չէին կարողանում այն դուրս քաշել: Այն աշակերտը, որին Հիսուսը սիրում էր, Պետրոսին ասաց՝ Տերն է: Երբ Սիմոն Պետրոսը լսեց, թե Տերն է, սփածանքովն վրան գցեց, քանի որ մերկ էր, և իրեն նետեց ծովի մեջ: Մյուս աշակերտներն էլ նավակով եկան. և քանի որ ցամաքից հեռու չէին, այլ երկու հարյուր կանգունի չափ միայն, քաշում էին ոռկանը ձկներով հանդերձ: Երբ ցամաք ելան, տեսան վառված ածուխի մի կրակատեղ՝ մի ձուկ՝ նրա վրա և հաց: Հիսուսը նրանց ասաց. «Բերե՛ք այն ձկներին, որ դուք հիմա որսացիք»: Սիմոն Պետրոսը [նավակ] մտավ և ցամաք քաշեց ոռկանը, որ լիքն էր հարյուր հիսուներեք մեծ-մեծ ձկներով:

Թեև այնչափ քան կար, բայց ոռկանը չպատռվեց: Հիսուսը նրանց ասաց՝ եկե՛ք ճաշեցե՛ք: Եվ աշակերտներից ոչ ոք չէր համարձակվում հարցնել, թե՛ դու ո՞վ ես, որովհետև գիտեին, որ Տերն է: Եկավ Հիսուսը, առավ հացը և տվեց նրանց. հույնպես և ձուկը: Այս երրորդ անգամն էր, որ շատուր երևաց իր աշակերտներին՝ մեռելներից հարություն առնելուց հետո:

Հանդիպում Գալիլիայում և տիեզերական առաքելություն

Իսկ տառամեկ աշակերտները գնացին Գալիլիա, այն լեռը, ուր Հիսուսը իրենց հետ ժամադրվել էր: Երբ նրան տեսան, երկրպագեցին նրան, իսկ ոմանք երկմտեցին: Եվ Հիսուսը մոտենալով՝ խոսեց նրանց հետ ու ասաց. «Ինձ է տրված ամենայն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք սպտոհետև ձեզ աշակերտ դարձրե՛ք բոլոր հեթանոսներին և մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մի աշխարհի վախճանը»:

(Նոր Կտակարան, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1989, Ավետարան ըստ Ղուկասի, էջ 288—284, Ավետարան ըստ Հովհաննեսի, էջ 365—366, Ավետարան ըստ Մատթեոսի, էջ 106):





**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

Ապրիլի 14-ին, կիրակի.—Ջատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Գարնանային բուրումնավետ առավոտ է բացվել Արարատյան դաշտի վրա:

Վաղ առավոտվանից հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարն ու նրա շրջափակը՝ մասնակցելու համար մեր եկեղեցական և ազգային մեծ տոնի՝ Ջատիկի հանդիսություններին:

Ժամը 11-ին ուրախ ու տոնական դողանքով են Մայր տաճարի զանգերը: Վեհափառ Հայրապետը, քահանայապետական փառահեղ զգեստավորման մեջ, Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ, հանդիսավորապես Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական սուրբ պատարագը:

Սկսվում է սուրբ պատարագը, որի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Ջատիկի առթիվ, Վեհափառ Հայրապետը խոսում է կրոնաշունչ և հայրենաբույր մի քաղոք, որը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քաղոքը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 8):

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահասրահ:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և ներկա ողջ հավատացյալների, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը շնորհավորում է Ն. Ս. Օձուրյան Ջատիկը, ցանկանում նրան երկար ու երջանիկ օրեր՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շնորհավորում է ողջ հայության այս մեծ տոնը, օրհնում հայ եկեղեցին, ազգը, հայրենիքում և ի սփյուռս աշխարհի, ցանկանում նրան խաղաղ ու քաղաքավան օրեր:

Ներկաներն աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետի Ջատիկը:

Ջատկական հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է զատկական ճաշկերույթ:



**ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 59-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ
Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ**

Ապրիլի 24-ին, չորեքշաբթի.—Յիշատակ բիրաւոր նահատակացն մե-
րոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի.

Ապրիլյան եղեռնի 59-րդ տարեդարձի տխուր առիթով Մայր տաճարում,
Նահատակաց հիշատակին նվիրված խորանի վրա, ս. պատարագ է մատու-
ցում տ. Հովհաննես ավագ քահ. Մարությանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը՝ շրջապատ-
ված Մայր Աթոռի միաբանության անդամներով:

Ս. պատարագին ներկա են նաև Մայր Աթոռի շուրջ աշխատավորությու-
նը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և հավատացյալների մի հոծ
քաղմություն, ինչպես նաև քաղում ուխտավոր սփյուռքի զանազան համայնք-
ներից:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը խոսում է հոգելից ու
հայրենաբույր հետևյալ քարոզը՝ ոգեկոչելով խնկելի հիշատակը Ապրիլյան
Նահատակների:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ 1974 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ**

Սիրելի սգակիր ժողովուրդ,

Այսօր ապրիլ 24-ն է: Այս ս. տաճարի կամարների ներքո հավաքված
ենք, սուրբ պատարագավ և հոգեհանգստյան արարողությամբ, աղոթելու
մեր բյուրավոր նահատակաց համար և մաղթել նրանց հոգիներին հանգիստ
և հավիտենական խաղաղություն:

Այս ս. տաճարը, ինչպես քաջ գիտեք, աշխարհի հնագույն սրբավայրե-
րից մեկն է: Հազար և վեց հարյուր տարիների պատմություն ունի նա: Բա-
սում դարերի ընթացքում, Մենք պատկերացնում ենք այժմ Մեր աչքերի



հետև մենք նույնքան վիշտ և ափսոսանք ենք զգում նաև այլոց զոհերի համար: Գուցե ավելի քան այլ ազգեր, աշխարհում, մենք հայերս ավելի ենք հասկանում ուրիշի տառապանքը, ուրիշի ողբերգությունները: Թող ժողովուրդները հասկանան վերջ ի վերջո, որ նման ճանապարհներով, պատերազմներով, ցեղասպանություններով, կոտորածներով ոչ մի հարց չեն կարող լուծել և ոչ ոքի չեն կարող երջանկացնել, ընդհակառակը, դժբախտությունը կլինի համատարած, դժբախտությունը կտարածվի ուշ կամ շուտ նաև բոլոր նրանց վրա, ովքեր պատերազմներ են սանձազերծել և ովքեր կոտորածներ են կազմակերպել: Մենք հավատում ենք աստվածային արդարության:

Սիրելի ժողովուրդ, հաճախակների հարգանքի մեր տուրքը մատուցելու այս պահին Մենք անդրադառնում ենք նաև մի ուրիշ ճշմարտության, այն է՝ որ հայ ժողովուրդը ճիշտ է, կոտորվեց, գրեթե կիսով չափ, բայց մնացած կեսը, Արևելահայաստանը, որի մեջ մենք այժմ ապրում ենք՝ փրկվեց: Վերածնվեց հայկական նոր պետականությունը: Հայ ժողովուրդը հետզհետե համախմբվեց այստեղ: Մոտիկ ամցյալում գրեթե ամողունդի եզրին հասած մեր երկիրը դարձավ շատ ավելին, քան երազում էին մեր նախորդ սերունդները: Սովետական մեր մայր հայրենիքը, խաղաղ, ապահով ու կենսունակ, այսօր միակ հույսն ու ապավենն է համայն հայության, միակ գրավականը մեր ազնիվ երազանքների իրականացման թե՛ հայաստանի ժողովրդի համար և թե՛ ի սփյուռս աշխարհի ապրող մեր պանդուխտ զավակների համար: Զորացնել մեր այսօրվա ապրող ու միշտ կառուցվող Հայաստանը, ամենայն հայոց Հայաստանը, է՛լ ավելի շենացնել նրան, է՛լ ավելի ծաղկեցնել նրան, ճշանակում է՝ լավագույն ձևով հարգանք մատուցել մեր հաճախակների հիշատակին: Ասված է արդեն, և Մենք ուզում ենք կրկնել, թե արդի մեր մայր երկիրը իր ժողովրդով, իր իրագործումներով, կյանքի և աշխատանքի բոլոր բնագավառներում հանդիսանում է անխորտակելի ու կենդանի ամենափառավոր հուշարձանը, նվիրված մեր երկու միլիոն զոհերին:

Այս ճշմարտությունը երբեմն քավարար չափով չի հասկացվում սակայն: Մեր կյանքում կան երևույթներ, որոնք դեռ վիշտ են պատճառում մեզ բոլորիս: Պետք չէ թաքցնենք մեր տկարությունները, մեր թերությունները: Մենք այնքան տառապած ենք ամցյալում և այնքան քան կորցրած, որ մեզ համար սրբազան և նվիրական է այն, ինչ որ մեզ մնացել է, այն, ինչ որ մենք ունենք, այն, ինչ որ մենք այսօր տեսնում ենք, որ օրեցօր աճում ու զարգանում ու ծաղկում է այստեղ մեր շուրջը:

Սակայն, նույնիսկ մեր մեջ, հենց Սովետական Հայաստանում, կան երբեմն առանձին ուղեկորույսներ, որոնք չեն հասկանում այս ճշմարտությունը և լքում են մայր հայրենիքը ու ընդմիշտ հեռանում, ապրելու համար չգիտենք որտեղ, գուցե ավելի շուալ կյանքի պայմաններ որոնելու, չգիտակցելով, թե ամեն հայ մարդ, որ պոկվում է մայր հողից, նա կորցնում է իր հոգին, կորցնում է իր զավակներին, իր թոռներին:

Երեկ իրիկուն մեր երիտասարդ միաքանցներից մեկը, արտասահմանցի, Մեզ մոտ եկավ, մտահոգված, ասելով, թե՝ «Գիտե՞ք Վեհափառ, լսեցի, որ որոշ թվով ընտանիքներ դիմել են պատկան մարմիններին՝ Հայաստանից ընդմիշտ մեկնելու համար»: Ապրիլի 24-ի նախօրյակին Մեր սիրտը արյունով լեցվեց: 2ի՛ կարելի հաշտվել այսպիսի հայերի մտայնության հետ: Այսպիսիները բարոյապես իրավունքը չունեն այսօր Միջնադարերի քարձրանալու: Մեր պարտքն է, մեր սրբազան կոչումն է, հայրաբար, եղբայրաբար, հայաբար խորհուրդ տալու բոլոր նրանց, որպեսզի չլքեն մայր հայրենիքը, որպեսզի չնվազի հայերի թիվը այստեղ: Այս է ճշմարիտ հայ մարդու խղճի պարտ-

քը: Եվ այսպես է, որ մենք իրապես հարգած կարող ենք լինել հիշատակը մեր նահատակների և հավատարիմ մնալ նրանց ուխտին, նրանց երազներին, նրանց արյան ձայնին: Նույնը կատարվում է նաև որոշ չափով Մերձավոր Արևելքում, որտեղից, չգիտենք ինչո՞ւ, հայեր ցրվում են աշխարհով մեկ, հեռանալով արարական եղբայրական երկրներից, հատկապես հայախնամ Լիբանանից, որ Մենք համարում ենք հայոց համար մի նվիրական հաստատուն օջախ: Բոլոր քարոյական ուժերը պետք է լարել, որպեսզի կանգ առնի այս երևույթը: Անշուշտ չենք կամենում ողբերգության վերածել այս հանգամանքը: Բնականաբար մեր երկրի երեք միլիոն հայության թվի համեմատությամբ մի քանի հարյուր ընտանիքներ ավելի կամ պակաս առանձին ճշմարտություն չունեն, քայքայվող և այդպես էլ հայոց Մեր սիրտը ցավում է, Մեր խիղճը վրդովում, հատկապես մեր նահատակների հիշատակին նվիրված այս պահին: Մենք պարտք զգացինք մեր կյանքի այս տխուր մեկ երևույթը ընդգծելու, որպեսզի արթուն մնա հայ ժողովրդի գիտակցությունը, և մենք բոլորս ոչ միայն խոսքով, ոչ միայն աղոթքով հարգենք հիշատակը մեր մեռելների, աչև մանավանդ կենդանի գործով, շինարար գործով, հայրենամուկ գործով: Ինչպես առաքյալն է ասում. «Խօսքը ատանց գործի մեռեալ է»: Մենք մաղթում ենք, որ թե՛ Հայաստանի մեջ բնակվող Մեր զավակները և թե՛ մեր պանդուխտ ժողովուրդը, այս ոգով ամրապնդեն իրենց գիտակցությունը:

Հարգանք, լույս և օրհնություն մեր բյուրավոր նահատակների հիշատակին:

Հարգանք և փառք մեր վերածնված ժողովրդին, մեր հավիտենական Մայր Հայաստանին: Ամեն:

Վեհափառ Հայրապետի քարոզից հետո, Նրա հանդիսադրությամբ և ուղջ միաբանության անդամների մասնակցությամբ, եկեղեցական թափոռը, շարականով և խնկով, առաջնորդվում է Մայր տաճարի հյուսիսային կողմում գտնվող Նահատակաց հուշարձան, ուր կատարվում է մասնավոր հոգեհանգիստ:

Հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը երկյուղած բարեպաշտությամբ ուղեկցում է եկեղեցական թափոռին և հոգեհանգստյան տարրոդությանը:

Նահատակաց հուշարձանը ծածկվել է թարմ, գեղեցիկ ծաղիկներով:

Միաբանության անդամները և հոգևոր ճեմարանի ուսանողները մեկիկ-մեկիկ խոնարհվում են հուշարձանի առաջ և մեխակներ գետեղում նրա պատվանդանին:

Ապրիլյան եղեռնի առթիվ հայ ժողովուրդը, իր Հայրապետի գլխավորությամբ, իր աղոթքն ու հարգանքի կնդրուկն է մատուցում եկեղեցու և հայրենիքի ճահատակների խնկելի հիշատակին:

«Երանի մեռելոցն որք ի Տէր ճոջեցին»:

Ժամը 16-ին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և մայրալանքի պաշտոնեությունը բարձրանում են Ծիծեռնակաբերդ, հարյուր հազարավոր երևանցիների հետ՝ մի անգամ ևս խոնարհվելու Ապրիլյան եղեռնի զոհերի պայծառ հիշատակի առաջ:

Նման հանդիսություններ կատարվեցին նաև մեր ներքին բոլոր թեմերում:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ւ Մ

Ապրիլի 2-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետից է այցելում Մերձավոր Արևելքի օդանավային ընկերության երևանյան ներկայացուցիչ Ռոմե Կարսնյանը:

Վեհափառ Հայրապետի և հարգելի հյուրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Ապրիլի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր, երկույսն ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում Հնդկաստանի կրոնների մասին բուլանդակալից զեկուցում է կարդում հոգևոր նեմարանի տեսուչ տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը:

Ապրիլի 7-ին, կիրակի.—Ծաղկագարդ եւ աւետումն ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ է մատուցում տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Բրիտանի Երուսաղեմ մուտքի խորհրդի և հոգևոր նշանակության ուսուցիչ:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Կույն օրը, երկույսն, Մայր տաճարում տվանդակում հանդիսությամբ կատարվում է

Դոնբասցեի արարողությունը՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ Եպս. Սանթրոյանի հանդիսադրությամբ և մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության:

Ապրիլի 8-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետից է այցելում Հայաստանում հյուրաբար գտնվող գերմանական «Կոլմիշեն-րունդաու» թերթի մոսկովյան թղթակից Հայնց Լաթեն:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Ապրիլի 9-ին, երեքշաբթի.—Զատկական տոնակատարությունների կապակցությամբ պատարագելու և հանին կենաց քարոզությամբ հալատացյալներին մխիթարելու համար ներքին թեմեր մեկնեցին Մայր Աթոռի միաբաններ տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը՝ Լենինական, տ. Աղան վրդ. հալիոզյանը՝ հաջու, տ. Եզնիկ արդ. Պետրոսյանը՝ Ախալքալաք, տ. Կարապետ քհն. Գլորյանը՝ Ախալցխա, տ. Հակոբ քհն. Գյուկչյանը, ընկերակցությամբ վրեժ արկ. Նաջարյանի՝ Ռոստով, Հարություն արկ. Սարգսյանի ու Վաչե արկ. Նալբանդյանի՝ Թբիլիսի:

Ապրիլի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, Մայր Աթոռ ս. Էջմիածնից և Ամենայն Հա-

յոց Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղից է մեկնում Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Ոսկան Ծ. վրդ. Գալ-քակյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վե-հափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հան-դիպում, որի ընթացքում ԱՄՆ-ում գործող եկեղեցիների արդի վիճակի մասին զեկու-ցում է հոգևոր ճեմարանի ավագ վերակա-ցու Սարգիս սրկ. Սարգսյանը:

Ապրիլի 11-ին, հինգշաբթի.—Առաջ հինգ-շաբթի. Յիշատակ ընթերցեց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճա-րում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ժամը 18-ին Մայր տաճարում հանդիսա-վորությամբ կատարվում է «Զկարգ ոտնա-յուային»՝ հանդիսադրությամբ Մայր տաճա-րի լուսարարապետ տ. Հովսիկ եպս. Սան-թուրյանի:

«Ի գիշերին հսկումն է»:

Մայր տաճարում, Վեհափառ Հայրապե-տի հանդիսադրությամբ, կատարվում է խավարման կարգը:

Վեհափառ Հայրապետը, «Փառք ի բար-ձունս» երգից առաջ, հոգեշունչ քարոզ է խոսում խավարման գիշերվա խորհրդի և Հիսուսի մատնության ու չարչարանքի հո-գեվոր նշանակության մասին համամարդ-կային վրկագործության ճանապարհի վրա:

Ապրիլի 12-ին, ուրբաթ.—Յիշատակ չար-չարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Առավոտյան Մայր տաճարում պաշտվում է «Յիշատակ խաչելութեան և չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» կարգը:

Երեկոյան, Վեհափառ Հայրապետի հան-դիսադրությամբ, Մայր տաճարում կատար-վում է թաղման կարգը և ապա «Թափոր թաղման»:

Ապրիլի 18-ին, շաբաթ.—Առաջ շաբաթ. Ծրագալոյց Զատիկի:

Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամը 17-ին, Ծրագալոյցի պատարագ է մատու-ցում տ. Մասիս արդ. Գալստյանը: Ս. պա-տարագից առաջ հոգևոր ճեմարանի ուսա-նողները ընթերցում են Դանիելի գիրքը:

Ս. պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատար-վում է Զատիկի նախատոնակը, որից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան:

Ավելի ուշ մայրավաճքի սեղանատանը օրհնվում է Մայր Աթոռի աղն ու հացը, և միաբանությունը ճաշակում է Նավակատի-քի քարիքները:

Ապրիլի 15-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գուրգեն քհն. Աշուրյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պսւշտոն՝ «վասն համօրէն ցնցեցելոց»:

Ապրիլի 21-ին, կիրակի.—Կրկնագատիկ (Նոր կիրակի):

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիդյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն» (Հովհ. Ի 28) քննարանով:


Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն քիրաւոր նահատակացն մերոց համաշխարհային ա-ռաջին եւ երկրորդ պատերազմաց»:

Ապրիլի 28-ին, կիրակի.—Գ կիրակի Աշ-խարհամատարան (Կանաչ կիրակի):

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ արդ. Պետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Արիս Ծ. վրդ. Շիրվանյանը «Պարտ է ձեզ ծնանել վերստին» (Հովհ. Գ 7) քննարանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-փառ Հայրապետը:





ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԻՆԶԻՆՅԱՆ

ԼՈՒՅՍ ՏՈՒՐ, ՏԵՐ, ԱԶԱՅ ԻՄՈՑ

Մեր նախնիք շատ կգործածեին քառ մը, որը ներկա ժամանակներուն մոռացության տրված է. մեղսաբարձավ քառն է առիկա, որ կնշանակէ՝ մեղքերով լեցուն: Հատկապես Մեծ պահոց շրջանին պարտավոր ենք անդրադառնալ մեղքերով լեցուն մեր կյանքին, եկեղեցի՝ կրավիրն իր անդամներն ու զավակները, որպէսզի սրբեն զանոնք զոյնմով, ու Գրքի ընթերցմամբ և աղոթքով:

Աստվածային հայտնությունը սկիզբն մասնակիորեն տրված էր մարդկային ցեղին մարգարեներու միջոցով, որոնք խոշոր օրենսդիրներ ալ էին, բարոյական կանոններ տվողներ: Սակայն տեսնված է, որ ուր որ օրենք ու կանոն կհաստատվին, անօրենջությունն ալ կմտնէ, կամ օրենքը անաստղներ կգտնվին, և ասիկա արարչագործության օրերն են ի վեր, և կշարունակվի մինչև այսօր: Սակայն, հակառակ այն իրողության, որ մարդիկ տեսքար անաստեցիկն Աստուծո պատվիրանները, ի յրումն ժամանակաց, երկնավոր մեր Հայրը դրկեց իր Միածին Որդին, որպէսզի Քրիստոսի շնորհով գերծ մնանք մեղքերն և փրկվինք: Իր մահվամբ մեղքին հետևանք եղող մահը վերցվեցաւ և իրմով անկյալ մարդկությունը ժառանգակից դարձաւ հավիտենական երանական կյանքին: Բայց այս չի նշանակեր, թե այլևս ազատ ենք մեղանշելու Աստուծո պատվիրաններուն դեմ: Այլ յուրաքանչյուր անգամ պարտի ինք ևս հաղթել փորձության, մեղքին, իր կյանքին մեջ: Միածին Որդվույն մարմնաւորությունն ու մարդանալը մեծագույն խորհուրդն է, որով հասկնալի կդառնա, թե Աստված որքան շատ

կսիրե մարդկային ցեղը, մեզ, մեղքերով լեցուն մարդիկը: Գեղեցիկ բան մը կամ կատարյալ սիրելի հեշտ է անշուշտ, բայց մեղսաբարձ հետևարար չսիրելիք մարդը սիրել, աստվածային խորհուրդ է: Ահա վասիկ Քրիստոսով մեղքերն ազատելու և Աստուծո որդեգիրը ըլլալու ավետիսն է, որ կբարոզե քրիստոնէությունը սկիզբն ի վեր: «Որովհետև Աստված Քրիստոսով աշխարհը հաշտեցուց իր հետ, նոր կտակ կազմեց, մարդոց մեղքերը ջնջեց, ուստի կաղաչենք հաշտվեցեք Աստուծո հետ», կրնո Պողոս առաքյալ (Բ Կորնթագլոց Ե 20) և անմիջապէս կհավելու՝ Քրիստոս, որ մեղք չէր գիտեր, մեր մեղքերը իր վրա առաւ, որպէսզի իրմով արդարացանք:

Զարմանալին, տարօրինակը, սակայն, մարդոց համառիւն է իրենց մեղքերուն մեջ: Բանավորությամբ ու ազատ կամեցողությամբ ստեղծված մարդը բովանդակ արարչագործության մեջ միակն է, որ ազատ է բարին կամ չարը գործելու: Երևակայեցեք մեկը, որ գետը ինկած է և կքշվի ջուրերն, կամ փոսը ինկած է և առանձինն դուրս չկրնար գալ: Քրիստոս օգնության ձեռք կերկարե ու կը... մերծվի: Մերժողը իհարկե կնախընտրե, որ իր կեղտոտ փոսին մեջ մնա կամ մեղքերու հեղեղն քշվի և մահվան հետախուսդալ ծովը երթա: Ո՛վ է հողաշեն մարդը, ի՞նչ կարևորություն ունի: Յուրաքանչյուր արարածի վրկությունը շատ խոշոր նշանակություն ունի՝ արարչին համար: Սաղմոսներու մարգարեն կհարգրեն. «Ո՛վ է մարդ՝ զի յիշեալ դու զնա, կամ որդին մարդոյ, թէ այդ ինչ արարես դու նմա» (Սաղ. Ը 5): Աստված չի կամիր մե-

դավորից սահը, այլ զդառնալն նորա և զկյալսն:

Խոշոր տազնապի մը կամ սիրելիի մը մահվան ատթիվ կամ կյանքին անդադույն արժեքը, իմաստը փնտրած ատեննիս, չե՞մք մտածեր մեր երկնավոր Հորը մասին: Ուղիղ ճանապարհը Անոր հասնելու, Քրիստոս ցույց կուտա մեզի, որովհետև ճշմարտությունն է, ինչպես որ հայտարարեց Պիղատոսի առջև, երբ այս վերջինը հարցուց իրեն՝ ի՞նչ է ճշմարտությունը: Ըշմարտությունը մեզ կազատագրե մեղքեն:

Ինքզինք ունայնացնողը, այլոց համար մեռնիլ հաճն առնողը միայն կրնա կյանք տալ: Ծանապարհ ըլլալուն համար Աստուծո հասնելու ուղին ցույց կուտա: Ըշմարտություն ըլլալուն իրեն կհավատանք: Կյանք ըլլալուն, իր միջոցով հավիտենապես կապրինք: Արդարև մեռավ և հարյավ, որպեսզի մեզի ալ կյանք տա: Մե՛նք ալ անճանախորությունն ու ատելությունը, ազաճությունն ու հպարտությունը ունայնացնելով, արմատախիլ ընելով մեր ներսեն, կրնանք բարձրանալ սիրտ ավելի ազնիվ ու բարձր մակարդակի մը, որ իբրև ցույցում հիշեցնե Քրիստոսի անհաճնական սերը:

Աղոթքի հասկացողությունն ու ըմբռնումը ճնունդ կստեն ուրեմն Աստուծո՝ մեզի հանդեպ ունեցած սիրտ անսահմանությունն, որ մեծագույն խորհուրդն է: Աղոթքը մեր սլատասխանն է անկարագրելի, անճառելի այս սիրուն, որուն համար Պողոս առաքյալ կրնա. «Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուսւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատռաստեաց Աստուած սիրելեաց խորոց» (Ա. Կորնթ. Բ 9):

Աղոթելու բազմաթիւ տեսակներ ու ձևեր կան անշուշտ: Աստված ալ ինքզինք բազմաթիւ ձևերով հայտնած է մարդկության: Ծա՛տ պատճառներ ունինք զոհություն և փառք տալու մեր երկնավոր Հորը՝ մեր խնդրանքները իրեն մատուցանելու: Կարելի է առանձնակի աղոթել և՛ հավաքաբար: Եկեղեցիք, իբրև միասիւք մարմինը Քրիստոսի, հավատացյալներու խումբն է: Եկեղեցվո մեջ աղոթելու պահուն բոլոր հավատացյալներն ալ մի են ի Հիսուս Քրիստոս և որպես միություն կաղոթեն: Բայց հավաքական աղոթքը պետք չէ վերածվի ցուցամոլության, ինչպես տաճարին մեջ աղոթող Փարիսեցիք (Լուկ. ԺԸ 10), այլ աղոթել և ըսել Աստուծո. «Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբեք ճշեցեցիք ի մահ» (Սաղ. ԺԲ 4): Տեր, մարքիս լույս տուր, աչքերուս լույս տուր, որպեսզի բարին խորհիմ, խոսիմ և գործեմ, և չլլա, որ մեղքերուս մեջ մահվանը հավիտենապես ննջեմ:

Բոլոր մեծ մարգարեներն ալ կխոսին անպատ քաշվելու, այսինքն ատանճանալու, մտամոխրվելու և աղոթելու մասին: ԶԱստված մեր կյանքին կեդրոնը ըմտրելու և հանապազ աղոթք և զոհություն մատուցանել իհարկե ճիշդ կպահանջե. ասոր համար այդոր առաքյալը կըսե. «Յիշեցուցանեմ քեզ արծարծել զՃորհսն Աստուծոյ որ եմ ե քեզ» (Բ Տիմ. Ա 8):

Եթե բոլորովին անտեղի խնդրանքներ չեն մեր ներկայացուցածները Աստուծո, իրենի աղոթք, երկնավոր մեր Հայրը կիմանա զանոնք: Օրինակ, Դուկասու Ավետարանին մեջ կկարդանք, թե մարդու մը քարեկամը ուշ ատեն հեռավոր երկրե մը ժամանած է, և ուրեմն հյուրընկալը հարկ կտեսնե սեղան սարքելու և կենդիւններին իր դրացիին դուռը կգարնե, որպեսզի երեք մկանակ հաց խնդրե: Դրացին մտքեն կըսե. «Կենդիւնը է, եւ ալ, զավակներս ալ անկողին մտած ենք, հիմա չեմ կրնար ելլել և հաց տալ»: Բայց կհավելու Ավետարանը. ուզողին ժողովում, այսինքն համարձակության կամ անդրեսության համար կելլե և կուտու: Ապա դարձյալ կհավելու. «Դուք, որ չար եք, զիտեք ձեր զավակներուն ուզածները հայթայթել, որքան ավելի երկնավոր ձեր Հայրը բարիքներ կուտա անոնց, որոնք կը խնդրեն: Ապա ուրեմն բախեցեք և պիտի բացվի ձեզի, հայցեցեք և պիտի առնեք, եթե հոգվով և ճշմարտությամբ խնդրեք՝ ըսելով. «Ոգնական իմ լեր Տէր, մի լքեր զիս եւ մի թողուր զիս Աստուած Փրկիչ իմ» (Սաղ. ԻԷ 9):

Նույն Դուկասու Ավետարանին մեջ կըկարդանք նաև, թե քաղաքին մեջ դատավոր մը կար, որը ոչ Աստուծոմե կվախնար և ոչ ալ մարդոցմե կամչնար: Նույն քաղաքին մեջ այրի կին մըն ալ գալով դատավորին թախանձազին կխնդրեր, որ իր դատը տեսնե և վերջացնե: Օր մըն ալ դատավորը ձանձրացած կմտածե և կըսե յուրովի. «Թեև Աստուծոմե չեմ երկնչիլ ու մարդոցմե չեմ ամչնար, գոնե այս այրիին խնդրանքներն ազատելու համար սա դատը վերջացնեմ»: Դուկասու Ավետարանը կհավելու. «Եթե անիրավ դատավորը այսպես կըսե, հապա ձեր երկնավոր ու արդար Հայրը չլսե՞ր ձեր աղոթքները: Այժուշտ ձեր խնդրանքներն ու աղոթքները կլսե և կողորմի» (Լուկ. ԺԸ 2):

Սաղմսերգու մարգարեին հետ թող մեր աղոթքը ըլլա ըսել՝ լույս տուր, Տեր, աչաց իմոց, որպեսզի բարին խորհիմ, խոսիմ և գործեմ, չըլլա թե մեղքերուս բազմությունը զիս ըլկլմեն, և եւ մեղաւարտ մահով ննջեմ:



ՀԵՆՐԻԿ ԲԱՆՉԻՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10-րդ դարի նշանավոր պատմագիր Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու (Պատմաբան) «Հայոց պատմութիւն»-ը հայ իրականության մեջ ամենից շատ սիրված ու օգտագործված գրքերից է եղել: Հայրենասիրական ջերմ շնչով գրված և պատմական հավաստի վկայություններով, հերոսական դրվագներով ու գեղարվեստական գունեղ նկարագրություններով հարուստ այդ ստեղծագործությունը Խորենացու, Եղիշեի և մեր մյուս խոշոր պատմիչների երկերի մասն հետագա սերունդների համար եղել է ոգևորության աղբյուր, ձեռք բերել հայոց պատմության դասագրքի տեղը: Այս իսկ պատճառով այն բազմիցս արտագրվել է ու տարածվել ժողովրդի մեջ: Սակայն, անընդհատ ընդօրինակվելով ու օգտագործվելով, այդ Պատմությունը, բնականաբար, պահպանվել է ոչ հնագույն օրինակներով: Եթե Դրասխանակերտցու հետո հանդես եկած մի շարք պատմիչների (Ստեփանոս Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Սամուել Անեցի, Վարդան Արենելի և այլք) երկերը հասել են 12—14-րդ դարերի ընդօրինակություններով, ապա նրա Պատմության հնագույն օրինակները միայն 17-րդ դարի վերջերից են: Մինչդեռ այս ցույց մատենագրին վերագրվող մեկ այլ աշխատություն՝ «Շարհայեցանք հայոց», պահպանվել է 13-րդ դարի գրչության (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 579):

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմութեան» մեզ հայտնի ամենահին ձևագիր օրինակը գտնվում է Երուսաղեմի և Հակոբյանց վանքի № 375 ժողովածուում, որ ընդօրինակված է Վարդան Հունյադանի կողմից, 1685 թվականին՝ պատմիչի մահվանից ավելի քան յոթ ու կես հարյուրամյակ հետո: Երուսաղեմյան օրինակից չորս տարի հետո է գաղափարված (1689) Մաշտոցյան Մատենադարանի № 1896 ձեռագիր ժողովածուն, որտեղ ի թիվս այլ նյութերի կա նաև Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությունը (գրիչ՝ Հակոբ Երեց, տեղ՝ Բաղեշ, Ամրդուլու վանք): Ի դեպ այս օրինակի տարբերությունները, կարելի է գտնել Մատենադարանի «Հայոց պատմութեան» ավելի ուշ շրջանի ձեռագրերից մեկի (№ 1893) լուսանցքներում: Լնդհանրապես Մաշտոցյան Մատենադարանում պահպանվում է Դրասխանակերտցու Պատմության քսան գրչագիր օրինակ և մի հատված՝ արտագրված տպագրից: Այս քսան օրինակներից միայն մեկը, ինչպես նշեցինք, 17-րդ դարից է, երեք ձեռագիր 18-րդ դարից է, իսկ մնացած տասնվեցը 19-րդ դարում կատարված ընդօրինակություններ են: Հետաքրքիր է, որ այդ գրչագրերից երեքը գաղափարված են ցույց 1898 թվականի՝ ցույց Թավրիզ քաղաքում:

Դրասխանակերտցու Պատմության մի շարք գրչագիր օրինակներ կան նաև Վիեննայում, Երուսաղեմում, Փարիզում և այլ քաղաքներում: Հիշարժան է, որ Վիեննայի Սխիթարյանների ձեռագրատանց է այս վում Պատմության 17-րդ դարի մեկ այլ ձևագիր (№ 618)՝ ընդօրինակված 1680 թվականից հետո:

Դրասխանակերտցու Պատմության մի շարք գրչագիր օրինակներ կան նաև Վիեննայում, Երուսաղեմում, Փարիզում և այլ քաղաքներում: Հիշարժան է, որ Վիեննայի Սխիթարյանների ձեռագրատանց է այս վում Պատմության 17-րդ դարի մեկ այլ ձևագիր (№ 618)՝ ընդօրինակված 1680 թվականից հետո:

1 Ե. Եսա. Պոդարյան, Լոբն ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 300:

2 Հ. Զ. Ոսկյան, Ցուցակ հայկերեն ձեռագրաց Երթթարյան մատենադարանին ի Վիեննա, հատ. Բ, Վիեննա, 1963, էջ 89:

Ինչպես Մաշտոցյան Մատենադարանում, անպես էլ քոլոր ձեռագրական հավաքածուներում, ըստ մեզ հայտնի ցուցակների, Դրասխանակերտցու Պատմության գրչագիր օրինակները հիմնականում 18-րդ դարից են: Ընդ որում դրանց գրիչների կապը ստացողների զգալի մասը մանկավարժներ են: Հարություն Դասատու, Ստեփանոս Մանկավարժ և այլն): Սա հավաստում է, որ Դրասխանակերտցու երկը, հատկապես 18-րդ դարում, օգտագործվել է որպես հայ ժողովրդի պատմության ուսուցարան: Այս մասին է խոսում նաև Մաշտոցյան Մատենադարանի № 4442 ձեռագիր ժողովածուն (1870—1891 թթ.), որտեղ «ի պետս պատմութեան հայոց» ընդօրինակված են սր շարք հատվածներ պատմական վավերագրերից, այդ թվում նաև՝ Դրասխանակերտցու Պատմության տպագիր օրինակից:

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմութիւն»-ը մինչև այժմ ունեցել է վեց հրատարակություն: Ընդ որում, առաջին չորս հրատարակությունները ժամանակով նախորդում են ռազմաթիվ գրչագրերի: Պատմությունն առաջին անգամ հրատարակվել է 1841 թվականին Փարիզում, հրագետ Սեմ-Մարտենի ֆրանսերեն թարգմանությամբ. «Histoire d'Arménie par le patriarche Jean IV, traduite de l'arménien en français par H. J. Saint-Martin». Թարգմանությունը Սեմ-Մարտենը կատարել է, ավարտել էր արդեն 1812 թվականին, երբ նա նյութեր էր հավաքում իր նշանավոր «Mémoires historique et géographiques sur l'Arménie» երկհատոր աշխատության համար (1818 և 1819 թթ.): Թարգմանությունը կատարելիս նա օգտագործել է Փարիզի Արքայական գրադարանի (այժմ՝ Ազգային գրադարան) № 91 (այժմ № 212) ձեռագիրը: Վերջինս գաղափարված է 1788—1787 թվականներին՝ 1880 թվականի մի օրինակից: Ինչպես երևում է թարգմանությունից, այդ ձեռագրում Դրասխանակերտցու Պատմությունը քաժանկան է եղել 187 աճվերճագիր մանր գլուխներից (քացառված չէ նաև, որ այդ քաժանույն թարգմանիչն է կատարել): Սեմ-Մարտենի թարգմանությունը լույս տեսավ նրա մահից հետո՝ ֆրանսիացի քաճառք Ֆելիքս Լաժարի խմբագրությամբ, առաջարկով ու ծանոթագրություններով:

Փարիզյան հրատարակությունից հազիվ երկու տարի անց (1849 թ.) Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքը պատրիարք Զաքարիա արքեպիսկոպոսի ջանքերով լույս է ընծայում Դրասխանակերտցու Պատմությունը՝

մեկ ձեռագրի հիման վրա. «Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի ամենայն հայոց»: Ինչպես երևում է պատրիարքի հայոց: Ինչպես նախաբան-հայտարարությունից, փոքրիկ նախաբան-հայտարարության է պատմությունը «վաղընդիտյոք»՝ գոնե որոշ չափաւով: Բայց «հայտարարութեան» մեծ պահանջարկը: արդի ուսումնականաց» մեծ պահանջարկը: Զաքարիա պատրիարքը հույս է հայտնում, որ հետագայում՝ ավելի «քարեպատեմ» որ հետագայում ինքը կամ մեկ այլ ուսումնականը առավել լուրջ, գիտական սկզբունքով վերստին կհրատարակի Հովհաննես կաթողիկոսի պատմագրությունը:

«Հայոց պատմութիւն»-ը երրորդ անգամ լույս է տեսնում 1858 թվականին Մոսկվայում՝ Մկրտիչ Հմիճի աշխատությամբ. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն հայոց»: Այս հրատարակությանը Մ. Հմիճը կցել է մի նախնադաս, որտեղ քննադատել է Դրասխանակերտցու և նրա Պատմության գրության ժամանակի մասին եղած թյուր կարծիքները: Ինչպես իմանում ենք նախնադասից, Հմիճը Դրասխանակերտցու Պատմությունը հրատարակել է Մանր Մսերյանցի շնորհած օրինակի հիման վրա, որն այժմ գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում (ձեռ. № 8587, ժամանակ՝ 1811 թ., գրիչ՝ Իսահակ Արեւիկ): Զեռագրի վերջում գետնված է Մ. Հմիճին հասցեագրած Մ. Մսերյանցի նամակը, որը մեջ է բերված նախնադասին: Մ. Մսերյանցը, ինչպես գրում է իր նամակում, այդ ձեռագիրը նախօրոք բաղդատել է Պատմության երկու այլ ձեռագրերի հետ, որոնցից մեկը ինքն էր գաղափարել 1824 թվականին, իսկ մյուսը ստացել էր Հովհ. եպ. Շահխաթունյանցից: Ընդ որում վերջինիս օրինակը տառերկու այլ գրչագրերի համեմատությամբ սրբագրված է եղել: Ահա, Իսահակ Արեւիկի ձեռագիրը մանրագրից ընդհանրապես այդ երկու գրչագրերի հետ, Մ. Մսերյանցը, իր իսկ վկայությամբ, շտկել է նրա ուղղագրական սխալները, գրչական վրիպակները, պարզել աղավաղումները, լրացրել թերի հատվածները, կրճատել հավելումները և «զգլխաւորագոյն» ի տարբեր ընթերցումից կամ լերկալեւեաց ընտրանք ի ներքոյ դրոշմեալ» (էջ ԺԴ): Այսպիսի խնամքով մշակված ձեռագիր է ունեցել իր տրամադրության տակ Մ. Հմիճը Դրասխանակերտցու երկը հրատարակելիս: Բնագրի վերջում նա կցել է նաև 1848 թվականի Երուսաղեմի հրատարակության տարբերակները:

1867 թվականին Դրասխանակերտցու Պատմությունը վերստին հրատարակվում է Երուսաղեմում՝ Եսայի պատրիարքի հրամանով. «Պատմութիւն Յովհաննու կաթողի-

¹ Fr. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la bibliothèque nationale, Paris, 1908, p. 116.

կոսի»։ Երուսաղեմյան առաջին հրատարակությունից անհամեմատ բարձր մակարդակով է կատարված այս երկրորդ տպագրությունը։ Նրա նախաբան-ազդից իմանում ենք, որ Պատմությունը հրատարակության է պատրաստվել վեց գրչագիր օրինակների համեմատությամբ։ Դրանցից երկուսը ունեցել են միևնույն, իսկ չորսը՝ տարբեր նախագաղափար օրինակներ։ Ընդ որում երկու օրինակ ունեցել է գլուխների քաժանում (տարբեր քանակով), և դրանցից մեկը, որ բաղկացած է եղել 87 գլխից, ունեցել է գլուխների վերնագրեր, որոնք և օգտագործվել են հրատարակիչների կողմից։ Ի դեպ, Ն. Եպ. Պողարյանի ձեռագրացուցակի օգնությամբ մեզ հաջողվեց որոշել այդ ձեռագիրը։ Դա Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի № 1868 գրչագիրն է՝ ընդօրինակված 1846 թվականին, գրիչ Հովհաննես վարդապետի կողմից։ Հետագայից էլ մենք, որ այս ձեռագրում 1867 թվականի դեկտեմբերին Մ. Վ. Նազարյանը, որն անշուշտ Պատմության հրատարակիչներից է եղել, թողել է մի ծանուցում, որտեղ կարդում ենք. «Ի 1867 թուին նորոգ տպեալ Յովհաննէս կաթողիկոսն, որ բաղդատեցաւ ընդ հինգ (վրիպակ է, պետք է լինի վեց — Լ. Բ.) ձեռագիր օրինակսն, յորոց մինն է այս մատեան, է ընտիր գաղաքար նախնեաց. զայս առ ի ծանօթութիւն ապագայ եղբարց գրեցի՝ զի մի՛ աշխատ լիցին ընդ սմա ևս բաղդատել, եթէ դէպ լիցի ի նորոյ տպագրել»¹։ Ահա, այսպիսի թեև ոչ հնագույն, բայց ընտիր օրինակների համեմատությամբ հրատարակված է մի արժեքավոր բնագիր, որի տողատակին արտացոլվել է օգտագործված ձեռագրերի հիմնական պատկերը։ Հատկանշական է, որ այս հրատարակության համար չի օգտագործվել այն ձեռագիրը, որ հիմք է դարձել 1843 թվականի հրատարակության համար։ Այդ են ապացուցում երկու հրատարակություն-

ների բնագրային բազմաթիվ տարբերությունները։

Դրասխանակերտցու Պատմությունը լույս է տեսնում մահ 1812 թվականին Թիֆլիսում՝ Ղուկասյան մատենաշարով. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու պատմութիւն հայոց»։ Այս տպագրությունը, սակայն, լինելով 1853 թվականի մոսկովյան հրատարակության արտատպությունը, գիտականորեն առանձին նորություն չէր բերում։

1865 թվականին նորից Թիֆլիսիում լույս է տեսնում Դրասխանակերտցու Պատմությունը հայերեն լեզվով և վրացերեն զուգահեռ թարգմանությամբ. «იოანე ღვასიაძის დროება (786—925 წწ.)»։ Բնագիրը կազմել և թարգմանել է Է. Զագարեիշվիլին։ Վերջինս, սակայն, ներկայացրել է ոչ թե ամբողջ Պատմությունը, այլ միայն մասը միայն, որտեղ պատմագրված են 786 թվականից հետո կատարված անցքերը։ Մաշտոցյան Մատենադարանի չորս ձեռագրի (№№ 1892, 1896, 3537, 5692) և 1812 թվականի թիֆլիսյան հրատարակության համեմատությամբ Է. Զագարեիշվիլին կազմել է մի քանակյա բնագիր, որից և կատարված է վրացերեն թարգմանությունը։ Այստեղ ևս բնագիրը քաժանված է գլուխների, որոնց վերնագրերը դրված են Երուսաղեմի 1867 թվականի հրատարակության հետևությամբ։ Վրացի բանասերը Պատմության բնագրին կցել է մահ մի ծավալուն ուսումնասիրություն, որտեղ քննել է Դրասխանակերտցու կենսագրությունը, գործունեությունը և ստեղծագործությունը, անդրադառնալով հատկապես Վրաստանի մասին նրա հաղորդած վկայություններին։

Ամփոփելով մեր խոսքը, ասենք, որ չնայած այսպե՛ս հրատարակությունների, մինչև այժմ հրապարակի վրա չկա պատմական ու գրական մեծ արժեք ներկայացնող այս ստեղծագործության համահավաք քննական բնագիրը՝ ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով։ Այդպիսի հրատարակությունը ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է։

¹ Ն. Եպ. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հտ. 2, Երուսաղեմ, 1872, էջ 266։





ՋԵՓՅՈՒՌ ԹԱՌԱՅԱՆ

ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍԵՎ ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

Հայ կիրառական արվեստի մի ճյուղն են կազմում դաջովի գործվածքները, որոնք հայաշագարդված են դրոշմիչի օգնությամբ։ Նման գործվածքներում հատուկ տեղ են գրավում բնմի վարագույրները, որոնք հայկական եկեղեցիներում փոխարինում էին սրբապատկերներին և զարդարվում սրբոց պատմությունից առնված դրվագներով։

Բնմի վարագույրների դաջման և արտադրության կենտրոններից մեկն էր Մաղրասը։ Մայր տաճարի թանգարանում գտնվող Մաղրասի վարագույրներից ամենահինը պատկանում է 1725 թվականին և առավել մեծ արժեք է ներկայացնում գեղարվեստական տեսակետից։

Ըստ վարագույրի ընծայագրի, այն ստեղծվել է ի հիշատակ Քրիստոսի տանջանքների՝ տեր Զաքարեի և նրա ծնողներ Ռարեղամի ու Բալասանի, նաև նրա որդի Պետրոսի և դստեր Օսաննայի անունից։ Սակայն նրա՞նք են արդյոք նաև նվիրատուները և վարագույրը ստեղծողները, անհայտ է։ Բայց պարզ է, որ վարագույրի վրա աշխատել է շնորհաշատ մի արվեստագետ։ Նա աչքի է ընկնում սրբոց պատմության հիմնային իմացությամբ և թուլանդակության հմուտ հաղորդումով։

Վարագույրի տեսարանները հսկիված են Քրիստոսի կյանքին։ Արտասովոր են պատկերված ավետարանական կերպարների տիպերը, և մի ըսմի տարբեր բնորոշ չեն չքիստոնեական սյուժեի ախանդական հավորյմանը, այլ տողորված են հնդկական

ոգով՝ հակված պատմողականության և խորհրդանշականության։ Մեզ շատ ուշագրավ է թվում արվեստագետի կողմից քրիստոնեական սյուժեի վերամշակումը՝ ըստ հնդկական արվեստի մի քանի պահանջների։

Հորինվածքն իր տեխնիկական կատարելության շնորհիվ շատ ամբողջական է դիտվում, ինչպես կոթողային կտավ։ Տվյալ դեպքում դաջմանը հատուկ մանրամասներն աշխույժ ունենում կենդանացնում են վարագույրը։ Այդ ամբողջականությունը ձեռք է բերվել տեխնիկական տարբեր միջոցների գուգակցումով։ Բացի դաջումից վարագույրը գունավորվել է կաթսայում՝ ներկանյութով, նաև մեծ չափով այն նախազարդվել է վրձնով, որ հուշարձանը կատարման տեխնիկայի առումով մոտեցնում է հնդկական «դավամքարներին»։ Այդպես են կոչվում հնդկական ծիսական վարագույրները և նրանց կատարման տեխնիկան, որ բացառում է դրոշմի գործադրումը և կայանում է վարագույրը վրձնով (դավամով) պատկերազարդելու մեջ։

Կոմպոզիցիան լայնակի բաժանված է երեք մասի։ Վերին մասը կազմում է վարագույրի կեսը, բայց նրանում ներկայացված է միայն մեկ տեսարան։ Այն մնացած տարածքի վրա իշխում է իր կոթողայնությամբ, ուշադրությունը ամուսիններին բնականորեն վրա։

Դա Կողգոթայի տեսարանն է։ Պատկերազարդության օրենքներով, լուսինը և արե-

գլուխը (սրկույին խավարումի խորհրդա-
նշանը) կոմպոզիցիայի վերին անկյուննե-
րում են: Քրիստոսի մարմինը կրող մեծ խա-
չի վերին սախտակի վրա Քրիստոսի ան-
վանատուներն են: Խաչը խարսխված է մի
հիմքի վրա, որին փաթաթվել է հմայող
օձը:



Մանրամասնի վարագույրից

Բայց նմակական հողի վրա այն վերածվել
է զարդամասի:

Կամարների թուխքների միջև, ի լրումն
պատմության, ներկայացված են փոքրա-
ծավալ տեսարաններ, որոնցում ինքը Քրիս-
տոսը գործող աճձ չէ, բայց որոնք, աճ-
շուշտ, առնչություն ունեն նրա ճակատա-
գրի հետ:

Ջախ անկյունում հնդկական արքայիկի
հագուստով, երկար կապալով և խույրաձև,
գլխարկով, մախշագարդ թարծր թիկնակով
աթոռից բազմած է Պիղատոսը, ձեռքերը
բաժակի մեջ վանալով: Այդ տեսարանը մեծ
մասամբ լուծվում է ժանրային պլանով և,
նմանություններ ունենալով կովկասյան
շրջանի ցկարչության մեջ (Ախթալայի որմ-
նանկարները), Արևմուտքում չի տարած-
ված: Պիղատոսին կուծից ջուր է մատուցում
մորոքավոր մի «պատանի»։ դա ևս պատ-
կերագրական տիպի խախտում է:

Երկու կամարների միջև, կենտրոնում,
Քրիստոսի խաչումից առաջ աղոթքի տե-
սարանում Պետրոս առաքյալն է մեծ բանա-
լիներով, նրա կողքից, ֆոնի վրա, պատ-



Մանրամասնի վարագույրից

Երկու ճախող հրեշտակներ բաժակի մեջ
հավաքում են Քրիստոսի ափերից թափվող
արյունը:

Ավազակները խաչված են Քրիստոսի եր-
կու կողմում գտնվող ալեի փոքր խաչերի
վրա: Խաչերից մեկը դիտողին ուղղված է
կողովով, և սոսկ ավազակի գլուխն է տրված
դիմացից:

Յուզաբեր կանաչ ողբում են Փրկչին, իսկ
ետևում խաչը գրկել է ծնրադիր Աստվածա-
մայրը: Նկարիչն ունի հեռանկարի քավա-
կանույնի ուշագրավ ըմբռնություն: Առ-
հասարակ պատկերներն ունեն հարթա-
պատկերային լուծում, առանց հորիզոնա-
կան մակերեսների ճշման, և տրված են սև
ֆոնի վրա: Բայց խաչի ետևում գտնվող
Աստվածամայրը ներկայացված է ռակուր-
սով և փոքր-ինչ թարծր է հեռանկարային
կոմպոզիցիայի հետին պլանի մյուս կեր-
պարներից:

Վարագույրի ստորին կեսը կոմպոզիցիոն
ստույնով քաժանված է ևս երկու հորիզոնա-
կան շարքի, ընդ որում ցածի շարքը՝ առա-
վել մեծ թվով տեսարաններ: Տեսարաննե-
րից յուրաքանչյուրը մյուսից սահմանա-
կատված է հուրք հախշագարդ սյուններով և
որանց միացնող հնդկական ռոնով ցկարված
տաշապսակ ծոպավոր ճրքին կամարով:
Երևում են քրոնակալի արվեստի հուշար-
աններում այդպիսի կամարը կխորհրդա-
շեր տաճար, սրբարան և կնշանակեր, որ
որոշությունը տեղի է ունենում շենքում:

Կերված է նաև երեք կից՝ աղոթելու կեց-
վածքով ծալապատիկ նստած գորգիկների
վրա: Կանանցից աջ, սյան գլխին, աքաղաղ
է, որ ազդարարում է ողբերգական առա-
վուտը և Պետրոսի կողմից ուսուցչի ուրա-
ցումը:

Աջ անկյունում, ուռնուց կախված, Հու-
դան է. խիստ հազվադեպ կոմպոզիցիա:

Միջին հորիզոնական շարքը քաժանված
է երկու տեսարանի, անջատված կամար-
ներով: Առաջինում Աստվածամոր և Մա-
րիամ Մագթաղիցացու ողբն է Քրիստոսի
վրա: Կանաչ համապատասխանում են
հնդկական գեղեցկության չափանիշին:
Հնդկական արվեստին խիստ հատկանշա-

կան սանուն գծերով տրված է ձևերի, դեմքերի կորությունները, էթնիկական տիպի ընդգծված է փոքրիկ բերանով, մեծ աչքերով, կոր ծթով, պարանոցի ծալիկներով: «Դաջված» շրջագծետների հարուստ ծալավորումը նրանց պերճություն է տալիս:



Մանրամասներ վարագույրից

Մագթադինացու գլխին դրված է խույրածն բարձր գլխաճոց՝ կենտրոնում ութ կողմից ճառագայթող աստղի կամ վարդակի պատկերով: Այդ տեսարանում սրբերն են առանց լուսապսակի, բայց ծնրադիր Աստվածամոր դեմքը եզերված է կլոր սանրվածք ունեցող մազերով, ընդ որում երեք խոպրակներ ունեն լուսապսակի խաչի թևերի սովորական ուղղությունը:

Արվեստագետն ունի սիմվոլների արեւելյան հակում: Խաչից ձախ, որի ստորոտում նստած են կոծող Մագթադինացին և Աստվածամայրը, որ տարածել է շքեղ շրջագծետը Քրիստոսի տակ, սև ֆոնին պատկերված են սանդուղք, փշե պսակ, մուրճ (նույնպիսի մուրճ կա «Խաչելության»

նկարում), երեք մեխ և ւաքան, որոնք խորհրդանշում են «Խաչից իջեցնելու» տեսարանը:

Հաջորդ կոմպոզիցիան «Թաղումն» է, որ կատարում են հինգ աշակերտներ: Քրիստոսը խաչաձև կար վարչամակի վրա է:

Վարագույրի պատկերների ստորին հորիզոնական շարքը մասնատված է չորս տեսակների: Նրանցից երեքը Քրիստոսի չարաչարանքներն են: Նկարների վերին անչարաչարանքներն են: Նկարները ներկայացված է կլորներում իբրև սիմվոլներ ներկայացված է երեսուն արծաթ, որոնց համար Հուդան ժառանգ է Քրիստոսին, զատեր, որոնցով զինվորները խաղացել են Քրիստոսի հագուստների վրա:

Չորրորդ նկարում «Խաչակրություն» է՝ երեք զինվորների և երկու կանանց ուղեկցությամբ:

Բոլոր կոմպոզիցիաներում շատ քազմազան են գործող անձանց կեցվածքները, անհատականացված՝ կերպարները: Առաջին զինվորները, որպես կանոն, հասակով ցածր են՝ մյուսներից չձանկելու համար: Նրանք ունեն կեռ սրեր կամ սուր թրեր: Հնդկական հագուստեղենը ներկայացնում է խաչաձև մուկ կամ շերտավոր կապաներ՝ մանր դաջովի «չթի» մախշով, գոտիով, քղանցքի երիզով և շքեղ օձիքով, կարճ անդրավարտիքներ՝ կապաների տակից, սրածայր գլխարկներ և մախշուց մաշիկներ: Ամենայն հավանականությամբ, դա կենցաղային հագուստ է. նույնպիսի տարագույլ են պատկերված առաքյալները, որոնք Քրիստոսին փաթաթում են վարչամակի մեջ:

Էթնիկական տիպն արտահայտված է աչքերի կտրվածքով, թթի ձևով, ուսերին թափվող և նեղ ճակատներից հավաքվող ուլորում մազերով, կարճ խիտ մորուքով և երկար թեղերով: Քրիստոսը համապատասխանում է հենց այդ տիպին:

Պահպանելով միևնույն էթնիկական տիպը՝ վրձնի շարժումով յուրաքանչյուր կերպարին անհատականացված արտահայտություն է տրված՝ փոքր-ինչ վեր քաշած հեգնական հոնքերով, շրթերի ծոված գծով, շեղ աչքերի հետաքրքրասիրությամբ և այլն:

Անշուշտ, սրբերի, կանանց և առաքյալների դեմքերը, թեև վշտի խիստ պայմանական ընդհանուր արտահայտությամբ, ավելի միատեսակ են:

Պատկերագրության անբաաիր իմացությամբ և սահմանված կոմպոզիցիայի պահպանումով հանդերձ՝ խախտված է միայն աստվածաշնչական տիպը՝ հոգուտ հնդկական էթնիկական հատկանիշի:

Վարագույրը երիզված է կարմիր-կապույտ հանդիպակաց շուշաններով, հալկա-

կան Ռուշարձանը մշտապես բնորոշող այդ մոտիվով:

Մանրամասներում վարագույրը մոտենում է դալամքարի տիպի նկարների, բայց գործող անձանց «չթային» մանր գծանկարով դաջված հագուստները, հրեշտակների զույգները, սյուների նախշամոտիվները ստիպում են վարագույրը դաջովի համարել:

Չնայած իր ողջ մոնումենտալությանը, իր շեշտված և ուժեղացող լակոնիզմին, որ վերևի վերջին «Խաչելության» պատկերում հասնում է մինչև դրամատիզմի, վարագույրըն ավելի մերձ է մանրանկարների գեղանկարչությանը, քան թե որմնանկարչությանը, մի վիճակ, որ հատկապես կան է նուգուպտայական դարաշրջանի և հատկապես 18—17-րդ դարերի հնդկական արվեստին, երբ երևան է գալիս մի այնպիսի էլիեկտիկ Ռուշարձան, ինչպիսին են Ֆատեհաուր-Սիկրիի որմնանկարները, որոնք ներկայացնում են մեծացված մանրանկարներ: Դրանցից մի քանիսը նկարված են ըստ քրիստոնեական սյուժեներով եվրոպական փորագրությունների: Եվրոպայի ազդեցությունն ավելի ուժեղ զգացվում է մանրամասներում, քան պատկերների ընդհանուր կոնցեպցիայում. օղային հեռանկարը ֆոնների միջոցով, դիմանկարների ռեալիստականությունը:

Այդ մեկնաբանումն ուղղակի հակադիր է մեր Ռուշարձանին, որին հատուկ է լուրճային դեկորատիվությունը, հարթապատկեր՝ մուրթ գունահարաբերություններով: Այնինչ խուլ ֆոնը, կերպարների հարթ պատկերումը, խնամքով նկարված հագուստը, իր ճշտությամբ, գեղագրական հստակությամբ

բնորոշ՝ հատկապես դիմագծերի, մանրամասների, հագուստի և զարդարանքների գծանկարը սովորական են 17-րդ դարի առաջին կեսի հնդկական դիմանկարային մանրանկարչության մեջ:

Մադրասի գեղանկարչության դպրոցին հատուկ են պինդ, վառ գույներ՝ տաք տոների գերակշռումով: Նույնը հատուկ է նաև Մադրասի դաջված գործվածքներին: Սակայն մեր վարագույրն իր գույն, թեև մաքուր, կոլորիտով դուրս է Մադրասի ավանդական մոտիվներից: Սև ֆոնը հնչել է դարձնում նրա թափանցիկ գույները, և նկարիչը գնահատել է այդ հանգամանքը:

Դաջումը կատարվել է երեք սովորական ներկանյութերով. տորոնով, լեղակով և քրքումով: Կարմիրը կապույտի վրա, որտեղ պետք է, տալիս է մանուշակագույն, դարչնագույն. լեղակը և քրքումը միասին կանաչին են տալիս: Կտավի չնքնված հատվածները, որոնք վկայում են ներկից պահպանող բաղադրության գործածման մասին, ներկայացնում են ֆոնի սև գծով եզերված մերկ մարմինները, դեմքերը, և իրենց գործ տոնով ընդգրկվում են ընդհանուր գունային խաղի մեջ:

Արևելյան և արևմտյան դպրոցների տեխնիկական և գեղանկարչական միջոցների գուգակցումը, սյուժեի գրագետ պատկերումը, հազվագյուտ կոմպոզիցիան Ռուշարձանը դարձնում են ինքնատիպ, խիստ արժեքավոր գեղարվեստական տեսակետից, արտասովոր ինչպես մեկ, այնպես էլ մյուս ուղղության համար, և վկայում նկարչի ուժեղ անհատականության մասին:



ԴԱՎԻԹ ԶԵՅԹՈՒՆՑՈՒ ԶԱՓԱԾՈՒ ՏՈՄԱՐԸ

Մեր մատենագրության մեջ շատ հաճախ են զանազան նյութեր, նույնիսկ փիլիսոփայական գործեր, վերածել քանաստեղծական ձևի: Այն ունեցել է հատուկ արտահայտություն՝ «Ի ոտք հանել» կամ «Ի ոտ հանել»: Նպատակը խիստ գործնական էր: Բանաստեղծական ձևի մեջ նյութը հեշտ էր ընկալվում ազգի անելով: ԺՁ—ԺԷ դարերում սկսում են «Ի ոտ հանել» նաև տոհմաբանական, աշխատություններ: Այստեղ ավելի քան անհրաժեշտ էր այդ գործը: Արձույն չարադրանքի դեպքում աշակերտը ստանում էր մանրամասն, հստակ տեղեկություններով ծանրաբեռնված գիտելիքներ, որոնց մեծ մասը մեղ մասնագիտական էր և պահանջում էր հատուկ ուսումնասիրություն՝ սովորելու համար: Կարևորը զոհ էր գնում անկարևորին: Բայց հայ եկեղեցու սպասավորի համար անհրաժեշտ էր հեշտ գտնել գլխավոր տոհմերի օրերը, տանուտերը, սարեգիրը, օրվա ձայնը և այլն: Այդ բոլորը անհրաժեշտ էր նույնիսկ անգիր իմանալ: Իսկ քանաստեղծական սեղմ ձևը լավագույնս կարող էր ամենամանրամասն գիտելիքները հաղորդել ամփոփ և հստակ: Աշակերտը այն անգիր անելուց հետո, հեշտ կարող էր գտնել իրեն պետք եղածը: Այդ գործը շատ բարձր էր գնահատվում փամանակակիցների կողմից. հեղինակը այն մոռցնում էր ուրիշների խնդրանքով:

«Լյուրիստին» ամսագրի ընթերցողները ծանոթ են այդպիսի երկու չափաձո տոմարների, հրատարակված՝ մեկը 1952 թվի 2 համարում, մյուսը 1954 թվի 10 և 11 համարներում, Ա. Արաբամյանի կողմից: Առաջինը Ղուկաս Կեղեցու «Պատմություն Հոռոմոց մեծ տոմարի, պարզեալ հարանցն մեր նախնի» գործն է. իսկ երկրորդը Վարդան Կաֆայեցու տոմարն է, շատ ավելի ընդարձակ, որտեղ հեղինակը այսպես է պարզաբանում իր նպատակը.

«Վարդան ծառայ Հօր Աստուծոյ

Խորհուրդ արար շարադրելոյ

Այլ և ջանի ոտք հանելոյ

Դիւրեաւ մանկանց ուսանելոյ»:

Այժմ ներկայացնում ենք մի երրորդ՝ Դավիթ Զեյթունցու տոմարը, երկու նպատակով. նախ՝ ընթերցողների լայն շրջանակներին տրամադրելու համար մի «նոր տարբերակ» հավատարմով, որ այն շուրջ կտա հետաքրքրվողներին, երկրորդ՝ առանձնաճանաչում է մյուսներից որոշ կողմերով:

Ղուկաս Կեղեցու տոմարը, ինչպես առաջին տողերն են հուշում, հոռոմեական տոմարի վերածումն է. այնտեղ ոչ հայկական ամիսները կան, ոչ տոմարը, այլ այն, ինչ ընդունված է հոռոմեական տոմարով, ամփոփել է: Իսկ Կաֆայեցու տոմարը անգիր անելու համար շատ ընդարձակ է, որովհետև նախորդակում է ոչ միայն հայկականը, այլև հոռոմեական, պարսկական, պ-

քաղաքական և ասորական ամուսնուհանդիմանքով: Բազմաթիվ քաղաքական կան, տարբեր տեղերում գրված, որոնք հիշատակարանի արժեք ունեն և դասընթացի մաս չէին կարող կազմել: Այս համգամանքը թերևս իմաստ չուներ, եթե թվականը հիմնավորվում է քաղաքով: Եթե կա թվական պարունակող մի ջի ալոց, ըստ Ա. Արքահամյանի, Կաֆայեցու տոմարը գրվել է 1678-ին: Այս թվականը հիմնավորվում է քաղաքով: Բայց կա թվական պարունակող մի այլ քաղաք, որի՞ն Արքահամյանը ուշադրություն չի դարձրել: Ըստ այդ քաղաքի, տոմարի ժամանակը վերադառնում է մինչև 1641: Թերևս առանձին երկու գործեր են, հետո իրար կցված: Իսկ Կեղեցու գործը հաստատապես գրված է Ջեյթունցու գործից առաջ, որից և օգտվել է Ջեյթունցին իր տոմարը գրելիս: Կաֆայեցին աչքի առաջ է ունեցել և՛ Կեղեցու և՛ Ջեյթունցու տոմարները, և հայկական մասով հեցվում է վերջինի վրա: Ջեյթունցու տոմարը միայն հայկական տոմարն է, հայ եկեղեցու տոմարով և անհրաժեշտ գիտելիքներով: Օգտվելով Կեղեցու տոմարից, նա իր հաշվումները կատարել է հայկական ամսանունների և տոմարագիտական տվյալների վրա. մի բան, որ բարձրացնում է իր աշխատանքի մանկավարժական արժեքը, որովհետև այնտեղ աշակերտը հստակ և հակիրճ գտնում է այն բոլորը, ինչ անհրաժեշտ է իր եկեղեցական կյանքում, ընդհուպ մինչև օրվա ձայնը գտնել: Անշուշտ աշխատությունը տոմարագիտական խոշոր արժեք չի ներկայացնում, բայց ամպայման կարևոր է հայ տոմարագիտության պատմության համար: Տոմարին կցված է մի հիշատակարան, որը ճանաչողական մեծ արժեք ունի: Իսկ ո՞վ է Դավիթ Ջեյթունցին:

Դավիթ Ջեյթունցու անունը հայ բանասիրությանը գրեթե անծանոթ էր մինչև Ն. Ադունցի «Նշանավոր աշխատությունը» «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնությունից մոտին»: Անվանի հայագետը Ջեյթունցու «Մեկնություն Քերականի» աշխատության մասին գրում է միայն հետևյալը. «Ինչ որ Դավիթ Ամիդեցու աշխատությունը, որը ներկայացնում է Հովհաննեսի քերականության վերածումը հարց ու պատասխանի»: Հետո Գ. Ջահուկյանը իր «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» մեծագրության «Հավելված» բաժնում անդրադարձել է Ջեյթունցու քերականությանը ավելի հանգամանորեն, առանց հատուկ ուշադրություն դարձնելու հեղինակի կենսագրությանը: Մինչդեռ զանազան հիշատակարաններում մնացած վկայություններից իմանում ենք, որ նա «Այդ գիտնական և քաջ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ Հին և Նոր Կտակարանաց»: Նա եղել է մեծ մանկավարժ՝ «Բազում ջանի և աշխատութեամբ»: Նրան հատուկ գրով հրավիրել են Լվով, ղեկավարելու համար տեղի Հաճկատար ս. Աստուածածին վանքի հոգևոր ուսումնարանը: Ջեյթունցին գտնվելով Լվովում, նկատում է, որ իր աշակերտների մեծ մասը տեղական քարաոցներով խոսողներ են, ոմանք հայերենի՞ն ոչ լավ ծանոթ, և նախորդ քերականների ողջ ժառանգության նյութի վրա նրանց համար պատրաստում է քերականության դասագիրք՝ հարց ու պատասխանի վերածված, որտեղ աշակերտը գտնում է քերականության վերաբերյալ այդ շրջանի մակարդակով տրված գրեթե բոլոր հարցերն ու նրանց պատասխանները, երբեմն դիպաղներն (թաթարերեն) օրինակներով, հաճախ բացատրելով նույնիսկ հեշտ բառեր, որպեսզի ավելի մատչելի լինի: Նա իր քերականությանը կցել է նաև քերականական տերմինների մի բառարան՝ հայերեն-դիպաղներն: Ջեյթունցու քերականությունը այս իմաստով իր տեսակի մեջ ամենամարդջականն է և մատչելին: Դժբախտաբար Ջեյթունցուց այլ գործ, առ այժմ, հայտնի չէ մեզ, բացի այս երկուսից:

Զեյթունցու աշակերտներից Նիկոլ Լվովցի՞ն իր ճիշատակարանում նրան մահացած է հիշում 1815-ին: Ծննդյան թվականը անորոշ է: Բայց Ղուկաս Կեղեցի ճիր վերոհիշյալ տոմարում գրում է.

«Իսկ տէր Դաիթը՞ն Զեյթունցի
Յիճէ՞ն խնդրեաց և ես գրեցի
Ի խրախուրթին մանկագունի
Այլ յիմաստոց պարսաւելի»:

Ըստ մի այլ քառյակի, Կեղեցի՞ն իր տոմարը գրել է Հայոց 1008 թվին, որ է 1557-ին: Թերևս նա եղել է Կեղեցու ուսումնակիցը և իր ընկերոջը խնդրել է տոմարը չափածոյի վերածել իր մանկավարժական աշխատանքների համար: Համեմայն դեպս նա Կեղեցուց շատ փոքր չի եղել, նաև ոչ նրա աշակերտը: Ա. Արքաճախանը Կեղեցու ծնունդը դնում է ԺՋ դարու քսանական թվերին, ելնելով այն քանից, որ նա, տոմար գրելիս, գոնե պետք է երեւում տարեկան լինէր: Մենք, որոշ վերապահությամբ, ստույգ տվյալ չունենալու պատճառով, Զեյթունցու ծնունդը դնում ենք նույն դարու երեսնական թվերին, ընդունելով Կեղեցու տարիքային ավագությունը:

Այսպիսով, Դավիթ Զեյթունցի՞ն հայ միջնադարի աչքի ընկնող մտավորականներից է՝ քերական, տոմարագետ և մանկավարժ: Ձեռագրերի ուսումնասիրությունը կարող է բացահայտել իր գրչին պատկանող այլ գործեր, հատկապես, ենթադրում ենք, Հին և Նոր Կտակարանի մեկնություններ, իր ղեկավարած ուսումնարանի դասընթացների համար: Պե՞րճախոս օրինակ է քերականությունը:

Զեյթունցու տոմարը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 4001 և 6781 գրչագրերում: Այն հրապարակում ենք երկու օրինակների համեմատությամբ, ուղղագրական մասնակի ուղղումներով:

Պատճէ՞ն հայոց տոմարական
Ջոր ի նախնեաց մեր պարգեցա՞ն
Բայց ի Դաւթէս վանգ չափեցան
Ուտանաւոր շարադրեցան:

Կալցես գՀոռի ընդ կրկնակին
սոյնպէս առնես զամենեսին
Բայց կիսակին քրտան և ին
Կէս աւելի երթն ընդ նըմին:

5 Անուանք ամսոցն հայկազան
Նաւասարդի, Հոռի աշնան
Սահմի, Տրէ, Քաղոց ձմռան
Արաց և Մեհեկի, որ կան

5 Կրկնակ չկա Նաւասարդի
Երկուք Հոռի և չորս Սահմի
Վեց է Տրէ և Քաղոց մի
Երեք Արաց հինգ մեհեկի:

10 Եւ Արեգի ամիս գարնան
Ահկի և Մարերի աշնան,
Եւ յետ սոցա Մարգաց ամռան
Հոռտից և Աւելեաց լցան:

10 Դարձեալ կրկնակ չէ Արեգի
12 հիկի: Երկուք չորս Մարերի
Վեց է Մարգաց և մէկ Հոռտի
Եւ աւելեաց ալ ոչ պիտի:

15 Կրկնակ ամսոց սյուպէս գուգին.
Կալցես զաւուրս Նաւասարդի
Երթն երթաս զամենեսին
Մընա կրկնակ Հոռի ամսին

15 Կիսակ ամսոց այսպէս գործի.
Ի Նաւասարդէ առաջ թուի
Ամէն ամսիս մէս-եւէս առցի,
Երկամսոյն կիսակ կազմի:

6 A Նաւասարդիք
7 A Տրմէ
8 B Մեհեկի
15 A Երթն երթ B Ութմեր

5 B չիկա
7 B վեց
8 AB հինգ
12 AB Եւ փիւ եւ
15 A առցի
16 A երկամսոյն

- Քաշիք ամսոց երեսուն լինի
Այլ հինգ ամսոք կայ անելի
Արդ Մեհեկի ծնունդ վերջի
Թիւ մ'անելու ի նախանջի:
- 5 Փոքր թուական այսպէս արա.
Կալ զթուականը մեծ Հայկայ
Թիւ մ'անելի կայ ի նմա
Ի բաց գնա, որ ուղիղ գայ:
- 10 Երջան որջան որ յանլնայ
Տասն Որեւնան գամէնն գնա
Իերսուն ւերկուք այլ ընդ նոցա
Թիւ նոր տարուն է, որ մնայ:
- 15 Եւթն երեակ այսգոն արա
Կալ զթականն և բաժանեա
Քսան և ութ գամէնն գնա
Տես թէ ի խոնարհ որջան մնայ:
- 20 Ամէն չորս թիւ մէկ անլնայ
Եւթն երթաս թէ ինչ մնայ
Եւթնակ տարուն առնես գնա
Մի թուով պակաս, որ ուղիղ գայ:
- 25 Կալ զեւթներեակ անցեալ ամին
Թիւ մի անել վերայ նորին
Եւթներեակ ապագային
Լինի առանց թվականին:
- 30 Բայց ի չորրորդ ամ նախանջին
Ի եւթներեակ լինի կրկին
Մէկ մի ի մուտ նաասարդիս
Երկ Արեգի ամսամտին:
- 35 Ամսամտին կալցես թիւ մի
Ջեթնակ տարուն զկրկնակ ամսին
Եւթներ երթաս, որ վճարին,
Թէ մէկ մնայ է կիրակին:
- 40 Եւ թէ երկու երկուշարթին
Նոյնպէս երեք, որ ի կարգին
Օրագիտին կալ զօր ամսին
Եւ այլ որպէս զամսամտին:
- 45 Այսպէս արա վերադրին
Կալ զթականն որջան լինին
Տասն և իններ ձգես զինքնին
Մնայ խորանք վերադրին:
- Տես թէ քանի է թիւ նորին
Տասնումէկով բազմապատկին
Եւ իննասպազ ի բաց բառին
Եւ երեսնօք ձգէ զնոսին:
- 5 Բան զերեսուն որ ցած լինի
Այն վերադիր ներկայ սմին
Լրում և ծնունդ ւառուք լուսին
Սովաւ առնին ամենեսին:
- 10 Բայց իննևտասն երկասմին
Թիւ մի անել վերադրին
Բաշխեա զթուականն տասնին
Որ լիով գայ այն է տարին:
- 15 Այլ Անլեանց օրն վերջին
Ջինչ որ լինի գիր պատկերին
Եւթնեակ է իննդերձեալ ամիս
Եւ զվերադիր քանիք լուսին:
- 20 Վերադրով վերադրին
Կալ զվերադիր անցեալ ամին
Մետասան քեր վերայ նորին
Նոր վերադիր ապագային:
- 25 Ծնունդ լուսնի առնես տարուն
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն
Ջվերադիրն երթ կիսակ ամսուն
Մնայ ծնունդ այքան ամսուն:
- 30 Աւուրց լուսնին կալ զօր ամսին
Ջկիսակ նորին զթիւ վերադրին
Երթ երեսուն կամ անլին
Մնացեալն ամսուք լինի լուսնին:
- 35 Լրումն այսպէս արա լուսնին
Կալ քառասուն հինգ ընդ նմին
Երթ զվերադիր ընդ կիսակին
Մնայ ամսուք լոման լուսնին:
- 40 Առաջաւոր այսպէս շինեա
Երսուն և չորս թիւ արակա
Ի նախանջին թիւ մ'անելա
Եւ զվերադիր ի բաց զընա:
- 45 Ջմնացեալն Արաց օրագիտեա
Ի կիրակի առաջ գնա
Թէ կիրակի է օր նորա
Ի միսն անցին որ ճար չկայ:

1 A եռուն

19 A Եւթերեակ

18 B մնա

29 AB Եւթներեակ

25 AB չորրորդ

29 AB Ամսամտին

30 AB զկրկնակ

1 B ի փխ է

3 B եւ փխ եւ

9 B բառին

11 AB բաշխա

18 AB վերա

29 AB ամսում

27 AB Երդ

34 AB Կորս

40 AB չիկա

- Բայց ինճևտասն տարիքն որ է
Նա մի անգամ այս պատամնէ
Որ վերադիր մի թիւ առնէ
Առաջատրն սխալի:
- 5 Յորժամ երթաս ի յերեսնէ
Եւ չորս թուէ կամ և ճգէ
Զմնացեալքն երեսուն ի բաց
մերժէ
Եւ գայն Արաց օրագիւտ է:
- 10 Գիր քանալեաց այս գայն ճանէ
Առաջատրն որքան որ է
Յայտնութիւնէն առաջ թուէ
Հընգիւ պակաս գիր տարուի է:
- 15 Աւագ լրումն որ է Զատկի
Այսպէս արա ամէն տարի
Եւ զվերադիրն գնա աստի:
- 20 Թէ քան գերկտասան թիւ ամելի
Մնայ տացես Արեգ ամսին
Եւ թէ պակաս մինչև ի մի
Անկի ամսի օրագիւտի:
- 25 Պատկեր ատոր ինչ որ լինի
Թուեա և տոր ի կիրակի
Թէ ճանդիպի ի կիրակի
Ի միւս անցո Զատիկ լինի:
- 30 Որ վերադիր մի թիւ լինի
Երսուն այլ ած ոչ սխալի
Ի քառ չորից ի բաց ձգի
Զայլ Արեգի տոր ի կարգի:
- 35 Բանիք Զատկի թէ Արեգի
Ութ այլ ամել նոյնպէս Անկի
Չորորդ ամսոյն այնքան թուի
Վարդավառին տօն կատարի:
- 40 Բանիք անշարժ եղանակի
Օրագիւտով քստուգ ցուցանի
Ի ճինգն ամսոյն Նաւասարդի
Տօն է Փոխման Աստուածածնի:
- 45 Նոյնպէս ի ճինգ օրն Հոռի
Վերացման տօն է տոր Խաչի
Ի յինն օրն աշուն մտի
Տիւ և գիշեր Բաւասարի:
- 50 Տրէի տասն օրագիւտի
Բարեկենդան յիսնակ մտի
Քաղոցի մի տոր Յակոբի
Բարեկենդան առ կիրակի:
- 55 Ամից ամսոյ ի տասն եկի
Զմեռնամուտ դարձար և ին
Զի քարձրանայ ի ձմերայնի
Եւ խոնարհի ամառայնի:
- 60 Ի քսանումէկն յայտնութենի
Բարեկենդան Հայոց ազգի
Ի քսանուչորս կաղանդ լինի
Որ տարեմուտ է Բոռոմի:
- 65 Ի քսանուինն ծննդեան տօնի
Եւ մկրտումն է Քրիստոսի
Նա և ի յութըն Մեհեկի
Տնառնդառաջ տօն կատարի:
- 70 Ի երկտասանցն Արեգի
Գարնամամուտ Բաւասարակի
Ի երեսուն սրմից ամսի
Աւետիքն է Աստուածածնի:
- 75 Անկատեղն է ի յնոյն Անկի
Ընդ արևու շրջապատի
Ի տասնութն Մարերի
Անկեալ աստղունքն որ երևի:
- 80 Եւ ի Մարգաց տասերեքի
Ամառամուտ դարձ արևի
Բարձր է կողմամբ ճիւղսայնի
Եւ ցածութիւն Բարաւայնի:
- 85 ԶԱստուածածնին և գտորք
Խաչին
Զիսնակ մտի գտորք Յակոբին
Ի յետ դարձո գտորեքշարթին
Զճինգշարթին տոր ի կիրակին:
- 90 Այլ տանուտէր տարու ստուգէ
Երկտասանօք զթիւքըն ձգէ
Զցածն ի խոյնն առաջ բաշխէ
Յոր Բաւանի տարուն այն է:
- 95 Տանուտէրանցն անուանք այս է
Տուք աստեղաց սոցա ասէ.
Խոյն և Յուլն, Եկաւորն է
Եւ Խեցճետինն նախանջ է:

18 AB Արեգ
24 A Զատիք
31 AB Չորորդ

2 AB Բարեկենդան
7 B ի փխ ին
8 B քսանումէկն
12 A տարեմուտ
25 B տասնութեքի
27 B կողմամբ փխ կողմամբ

Առիծ և Կոյսն և Կշեռն է
Կարիճ կրկին նահանջ քերէ
Աղեղնաւորն, Այծեղջիւր է
Զրհուսն և Զուկն նահանջ է:

- 5 Ի տասնեւշորս Արեգ ամսուն
Արեգակն մտնու ի խոյն
Պարտ է զմի մի օր երեսուն
Զամենն երեք հարիւր վաղսուն:

- 10 Արարչութեանն հինգ ատուր
Արեգական զաստեղսն տուր
Լուծ լեղջուրի և ծկաւոր
Փառանձնոտի և արտախոյր:

- 15 Կսզ ի Զատկէն ուր ես
Ութ-ուրթ կամ քառասուն ձգես
Առաջի ձայնէ զինք քաժանես
Եւ զձայն ստորն գտանես:

- 20 Ոտանաւորս այս տումարի
Եղև ի Լոյ մեծ քաղաքի
Ընդ հովանեաւ Աստուածածնի
Հայրցոյն սուրբ եկեղեցի:

Քառանայից սրբազանի
Տէր Գաւրարիճ, տէր Խաչատրիճ
Տէր Վարդանիճ, որ եմ ի ամի,
Որ քաջ հովիւ եմ սուրբ ուխտի:

Նսւն վանից միաբանի
Կուսակոծն քահանայի
Եպիսկոպոս Ստեփանոսի
Տէր Կարապետ մեծ հայրապետի:

- 5 Եւ տէր Վարդան արեղայի
Եւ ընդ նոսին տէր Գրիգորի
Որ սպասաւորք եմ սուրբ ուխտի
Հաճկատար սուրբ Աստուածածնի:

- 10 Այլ տէր Սահակ արեղայի
Որ հանդիպաւ այսմ տեղի
Եւ ալ մանկաց սուրբ Սիովնի
Սարկաւագաց ամենայնի:

- 15 Թորոս Իվաշկօ և Սիմոնի
Եւ Զախնոյի քանասիրի
Որ աշխատին լետ սուրբ գիրքի:
Մակագութեանց և ընդ ճրթի:

- 20 Որք քաղձացան սրմին իրի
Եւ խնդրեցին և ես գրեցի
Յիմար Դաւիթս Զէթունցի
Զստկաւ տումարս ի ոտ հանի:

Ի հազար լիսուն թուականի
Ի ժամանակ քարեւոյաշուի
Եւ ուր թուով է անկի
Զիկմունտի քաջ թագաւորի:

1 B ի (կշեռն)

2 AB կուսակոծ

12 AB Սարգստագագ

19 B իմար





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՄԱՐՈՒԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1878 թվականի նոյեմբերի 30-ին Ստամբուլի հայոց ս. Երրորդություն եկեղեցում տեղի է ունեցել ս. Ներսես Ծնորհալի Հայրապետի հիշատակի պանծացմանը նվիրված հոգևոր տպավորիչ մի հանդիսություն՝ նախագահությամբ Վ. Պոլսի հայոց պատրիարք ամեն. տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալստյանի:

Քրիստոնեական եղբայրական սիրո և էկումենիկ ոգով կազմակերպված հորելյանական սույն հանդիսավոր տոնակատարությանը ներկա են եղել Վատիկանի ներկայացուցիչներ՝ Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ կարդինալ Ժան Վիլլերանդսը և քարտուղար հայր Պիեռ Դյուպրեն, հունաց պատրիարքական վոխանորդ Էմիլիանոս եպիսկոպոսը, գերմանական ավետարանական եկեղեցու պետ վերապատվելի Սլաքին, քիլդանիների կրոնապետ գերապայծառ Բաթթան, հայր Վեդադ Տյուտենը, հայր Ուիտլերը, հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ Հովհաննես արքեպ. Չուլաջյանը, Մխիթարյան միաբանության հայրեր, հանդիսությանը հրավիրված քրիստոնեական քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, պաշտոնական հյուրեր և հավատացյալ ժողովրդի մի հոծ բազմություն:

Հոգևոր հանդիսությունը սկսվել է երեկոյան խաղաղականի ժամերգությամբ և Ծնորհալու «Նայեաց սիրով», «Հաւատով խոստովանիմ» շարականների ներշնչող արարողությամբ, որին տ. Ծնորհք պատրիարքի գլխավորությամբ իրենց մասնակցությունը են բերել տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը, տ. Ծափան եպիսկ. Սվաճյանը, տ. Ասատուր վրդ. Միլոզյանը, տ. Վիգեն վրդ. Ալքազյանը, տ. Նաժակ վրդ. Պարսամյանը և հայ քահանայից դասը:

Այնուհետև գործադրվել է հոգևոր հանդիսության խնամքով կազմված ծրագիրը: Հանդիսությունը բացվել է «Որք զարդարեցին» իմաստալից և օրհնածայն շարականով: Ս. Ներսես Ծնորհալու վաստակաշատ կյանքին և գրական պատկառելի ժառանգությանը նվիրված բովանդակալից մի զեկուցում է կարդացել տ. Ծափան եպիսկ. Սվաճյանը: Ապա տ. Հարություն ավագ քահանա Հալաճյանը թուրքերեն լեզվով ներկայացրել է մեծանուն Հայրապետի կենսագրականը՝ ի մասնավորի կանգ առնելով նրա եկեղեցական գործունեության համաքրիստոնեական նշանակության վրա:

Ուղերձներից և ընթերցումներից հետո հայկական եկեղեցական կենտրոնական երգչախումբը, երգեհոնի նվագակցությամբ, հաջորդաբար կատարել է Ծնորհալու հանճարի լույսով թաթախված հայ հոգևոր երաժշտության գոհար մեղեդիներն ու շարականները՝ ս. Հովհաննիսի ձոնված զովերգը, «Առաւօտ լուսոյ»-ն, «Նորահարաշ պատ-

կատր»-ը, «Յիշեսցուք ի գիշերի»-ն, «Զարթո՞ք»-ը, «Սուրբ, սուրբ»-ը և զմայլելի «Ով զարմանալի»-ն:

Այնուհետև տ. Շնորհք սրբազան պատրիարքը իր սրտառույ խոսքով պանծացրել է հայ եկեղեցու երանաշնորհ Հայրապետի սուրբ հիշատակը՝ ընդգծելով բովանդակ շքեղությունը նրա ապրած իմաստալից կյանքի, որը եղել է անմնացորդ նվիրում Քրիստոսի Ավետարանին, առաքելափաստատ իր եկեղեցուն, իր ազգին ու նրա մշակույթին: Սրբազան պատրիարքը իր խոսքն ավարտել է շնորհակալություն հայտնելով բոլոր ներկաներին, որոնք պատվել են սույն հոգևոր հանդիսությունը և հարգել հայ եկեղեցու եռամեծ Վարդապետի լույս հիշատակը:

Շնորհք պատրիարքի խոսքից հետո հանդես է եկել կարդիմալ Վիլլերմանոսը հետևյալ ողջույնի ողերձով.

«Հոգեկան և կրոնական մեծ վայելք եղավ ինձ համար ներկա գտնվել հայ այս մեծ Սրբի հիշատակին նվիրված հանդիսությանը: Հոռմում մենք նույնպես պատրաստվում ենք պատշամ հանդիսությամբ նշելու Ներսես Շնորհալի Հայրապետի հոբելյանը: Այս կապակցությամբ է, որ ես առիթն ունեցա մոտիկից ճանաչելու Ներսես Շնորհալուն, որի նրբերն ու աղոթքները ուրախությամբ եմ լցնում հայ ժողովրդի սիրտը:

Ուզում եմ հայտնել սակայն, որ այդ նրբերը, սրբոք այնքան գեղեցկորեն հնչեցին ինչ տոաջ, մանավանդ ս. պատարագին մաս կազմողները, բոլորովին էլ անծանոթ չեին ինձ: Դրանցից մի քանիսը ես լսել էի ս. Էջմիածնի տաճարում:

Հոռմեական կաթողիկե եկեղեցու և հայ առաքելական եկեղեցու միջև վերջին շրջանում հաճախակի սերտ շփումները առիթ են լինում, որ այս երկու եկեղեցիները առավել լավ ճանաչեն միմյանց, առավել հարստանան միմյանցով: Ես անձնապես բախտավորությունն ունեցա ներքևից լսելու ս. Էջմիածնում և այնտեղ, ինչպես նաև Փարիզում կամ այլուր, առիթն ունեցա մոտիկ հարաբերություններ ունենալու հայ եկեղեցու հետ: Ինձ համար անմոռանալի պիտի մնա Նորին Սրբություն Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի այցելությունը Հոռմ՝ ընկերակցությամբ հայ եկեղեցու երկու պատրիարքների և այլ բարձրաստիճան հոգևորականների:

Քրիստոնեությունը այսօր տարածված է բազմաթիվ ազգերի մեջ, բայց հայերը առաջիններից մեկն են եղել, գուցե և առաջինը, որ ընդունել են քրիստոնեության լույսը: Տարբեր լեզուներ և տարբեր մշակույթներ ունենալով հանդերձ բոլոր քրիստոնյա ժո-

ղովորդները կարող են միանալ քրիստոնեության միակ լույսի տակ: Միշտ է, անցյալում քաժանկել են նրանք, սակայն այսօր բոլոր եկեղեցիները, մենք բոլորս էլ լսում ենք Քրիստոսի կոչը, որ միաբանության է հրավիրում մեզ: Պահելով հանդերձ մեր առանձին ավանդություններն ու ծեսերը, մենք սիրով և հավատով ու մեկ ձայնով մոտենում ենք միմյանց: Իր ժամանակին Շնորհալին ցույց է տվել այս մերձեցման լավագույն օրինակը:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այս բացառիկ հանդիսությանը հրավիրված լինելու և այս անակնկալ հոգեկան հաճույքը վայելելու համար»:

Կարդիմալ Վիլլերմանոսի խոսքերը հայերեն է թարգմանել տ. Շնորհք պատրիարքը, որը, հանդիսության ավարտին, Վատիկանի մեծարգո ներկայացուցչին հրավիրել է միասնաբար աղոթելու:

Երգչախմբի կողմից կատարված Տերունական աղոթքի հանդիսավոր և հուզիչ մեղեդիների ներքո ավարտվել է ս. Ներսես Շնորհալու հիշատակին նվիրված սույն ամսնոռանալի հոգևոր հանդիսությունը:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՒ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՇՈՒՄԸ ՀՌՈՍՈՒՄ

Հոռմեական կաթողիկե եկեղեցու Քրիստոնյաների միության քարտուղարության նախաձեռնությամբ սույն թվականի հունվարի 19-ին Հոռմի Լաթերանենսեի համալսարանի դահլիճում տեղի է ունեցել ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն՝ նախագահությամբ կարդիմալ Ժան Վիլլերմանոսի:

Հանդիսությանը ներկա են եղել հայ կաթողիկե պատրիարք Իգնատիոս-Պետրոս ԺԶ Պաթարյանը, Արևելյան եկեղեցիների ս. ժողովի նախագահ կարդիմալ Ֆիլիպը, սուրբ Տարվա հանդիսությանը հանձնաժողովի նախագահ կարդիմալ Մաքսիմիլիեն դը Ֆյուրստենբերգը, ս. Խորհրդի ժողովի նախագահ կարդիմալ Ամտոն Սամբեն, Հայեպի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ Գևորգ արքեպ. Լայեքյանը, Միլանի հայոց թեմի առաջնորդ Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, Կարապետ եպս. Ամատունին, Հոռմում աստրական պատրիարքության ներկայացուցիչ Իգնատիոս արքեպ. Մաքսիմիլիեն, հայ և օտար բազմաթիվ հոգեվորականներ, Միսիթարյան միաբանության հայեր, Լեռնյան և Միսիթարյան վարժարանների սաներ, Անարատ հղության հայ քույրեր, օտար պաշտոնական աշխիներ և բազմաթիվ հայեր Միլանից՝ ընդամենը 400 հոգի:

Հանդիսությունը քաջ է արել կարդինալ Վիլլբրանդսը՝ հայտնելով, որ Հռոմի եկեղեցին մեծ սիրով և զմահատանքով է ոգեկոչում ու մեծարում հիշատակը ս. Ներսես Շնորհալի Հայրապետի, որը հանդիսանում

մերկայացրել է Շնորհալու մատենագրական վաստակն ու եկեղեցական գործունեությունը՝ գլխավորապես ծանրանալով հայ եկեղեցու մեծ Հայրապետի էկոմենիկ ոգու և ըմբռնումի վրա:



Ս. Ներսես Շնորհալու հիշատակին նվիրված

դրոշմանիշներ Վատիկանի կողմից պատրաստված

է մի մեծ ու սիրելի դեմք ինչպես հայ առաքելական եկեղեցու, այնպես էլ հայ կաթողիկե եկեղեցու համար: Կարդինալ Վիլբրանդսը Շնորհալուն դասելով քրիստոնեական եկեղեցու մեծանուն հայրապետների շարքը՝ ճշել է, որ մա հայ եկեղեցու համար ունեցել է այն արժեքն ու նշանակությունը, ինչ արժեք ու նշանակություն որ ունեցել է ս. Եփրեմ Ասորին ասորական եկեղեցու համար: Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահը, հատկապես շեշտելով Շնորհալու գործադրած եռանդուն ջանքերը միութենական հարցում, հիշել է, որ նա տևապես ձգտել է եղբայրական սիրալիք հարաբերություններ ուսերտ գործակցություն հաստատել թե՛ Հռոմի Աթոռի և թե՛ հույն և ասորի եկեղեցիների հետ:

Իր խոսքի վերջում կարդինալ Վիլբրանդսը շնորհակալություն է հայտնել հանդիսությանը մերկա եղող քարձրաստիճան հոգեվորականներին ու հյուրերին և ապա օտուր լեզվով ընթերցել է Շնորհալու՝ ս. Հարությունը նվիրված շարականը հայր Մեսրոպ Օսնաշյանի թարգմանությամբ:

Հանդիսության գլխավոր քանախոսն է եղել հայ կաթողիկե պատրիարք Իգնատիոս Պետրոս Պաթսնյանը, որը հանգամանորեն

Գեղարվեստական քաժնում երգչախումբը մեծ վարպետությամբ կատարել է Շնորհալու ծանոթ շարականներից մի քանիսը՝ խմբավար Վիտալիյի դաշնավորումով:

Իր փակման խոսքի մեջ կարդինալ Վիլբրանդսը այն միտքն է հայտնել, թե «էկոմենիզմի առաքյալի» հոբելյանի նշումն ու նրա հիշատակի պանծացումը այսօր համահայկական չափանիշով լավագույնս ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը հավատարիմ է մնացել ս. Ներսես Շնորհալու թողած կտակին: «Եվ եթե այսօր ս. Ներսեսը անձնական մի դրոշմ տվեց հայ եկեղեցուն,—շարունակել է զարգացնել իր միտքը կարդինալը,—հայ ժողովուրդն էլ յուրահատուկ մի մակդիր տվեց իր սիրելի Հայրապետին՝ նրան կոչելով Շնորհալի»:

Այնուհետև կարդինալ Վիլբրանդսը, հիշելուց հետո, թե ինքը քազմիցս առիթ է ունեցել ծանոթանալու հայ ժողովուրդին ու նաև մի քանի անգամ եղել է ս. Էջմիածնում, Երևանում և Գեղարքում, որ ս. Ներսեսի այս նկարագիրը, որ նրա շնորհալիությունն է, ժառանգել է նաև հայ ժողովուրդը: Ժառանգությունը սակայն, միաժամանակ, հարադրում է ծանր պատասխանատվություն: Շնորհալին ճանաչեց հայ եկեղեցու միությունը՝ քրիստոսի ընդհանրական եկե-

դեցու հետ: Այս հաղորդությունը, որը կայանում է ս. Խորհուրդների հավատի ավանդության մեջ, գրեթե միշտ եղել է կատարյալ: Եթե այսօր դեռ պակասում են մեզ մի

ցում տեղի է ունեցել քրիստոնեական եկեղեցիների «հավաքական ալոթքի օրը»: Միջքրիստոնեական սույն պաշտամունքից ներկա են եղել հոռմեական կաթոլիկ, անգ-



1173 - 1973

Un Apostolo dell'Ecumenismo

COMMEMORAZIONE
DELL'OTTAVO CENTENARIO
DEL PIO TRANSITO DI

S. NERSES IV SHNORALI
PATRIARCA DEGLI ARMENI

NELL'AULA MAGNA DELLA PONTIFICIA UNIVERSITA' LATERANENSE
Piazza San Giovanni in Laterano, 4 - Roma

Ս. Ներսես Ծնորհալույն ճգիրված հանդիսության հրավիրատմսի շապիկը. Հոսմ

լանի տարրեր, Ծնորհալու թույլած ժառանգությունը ծանր է, որովհետև մեզ ասում է, թե պետք է որոնենք միջոցները և ի գործ դնենք մարդկային թուր ջանքերը՝ վերահաստատելու համար եկեղեցու միությունը իր ամբողջության մեջ: Ուղղափառություն և կաթողիկոսություն,— եզրակացրել է կարդինալ Վիլլերանդսը,— երկու հակոտնյա տարրեր չեն. ճշմարիտ կաթողիկոսությունը չի կարող չլինել ուղղափառ, ինչպես ճշմարիտ ուղղափառությունը չի կարող չլինել կաթողիկոս:

Հանդիսության նախագահը իր խոսքը վերջացրել է Ծնորհալու մեկ աղոթքով:

Նույն օրը Վատիկանում հրատարակվող «Սուրբատորե Ռոմանո» շաբաթաթերթը մեծածավալ մի էջ է ճկիրել Ներսես Ծնորհալուն՝ մանրամասնորեն ներկայացնելով նրա կյանքն ու գործունեությունը:

ՄԻՋՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Սույն թվականի հունվարի 20-ին Բանկաթի (Ստամբուլ) Սենտ-Էսպրի եկեղե-

լիկան, ավետարանական, հումակույն և բույրարական օրթոդոքս և ասորական եկեղեցիների ներկայացուցիչները:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու կողմից արարողությանը մասնակցել են Ֆերիզյուլի ավագներն ու Հարություն ավագ քահանա Հայանյանը և խաչիկ ավագ սարկավագ Սիրականյանը:

Երեկոյան ժամը 17-ին տարբեր դավանությունների պատկանող հոգևորականներ հանդիսավոր թափոքով մուտք են գործել եկեղեցի՝ հայ և օտար բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ:

Հիսուսյան միաբանության անդամներից հայր Պաստին ֆրանսերեն լեզվով կատարել է արարողության բացումը: Այս առանձին եկեղեցիների ներկայացուցիչներ տարբեր լեզուներով հանդես են եկել աղոթքներով, բարոգներով կամ Ավետարանի ընթերցումներով: Հայ առաքելական եկեղեցու անունից թուրքերեն լեզվով հակիրճ մի ուղերձ է կարդացել տ. Հարություն ավագ թեմ. Հայանյանը «Սիրո և եղբայրության գաղափարական» նյութի շուրջ: Այնուհետև Ֆերիզյուլի ս. Վարդանանց երկսեռ

երգչախումբը, երգեհոնի նվագակցությամբ, քառամայն, կատարել է Օգոստյան պատահարագից հատըմտիք հատվածներ՝ «Գովեա երուսաղէմ»-ը, «Սուրբ, սուրբ»-ը, «Տէր, ողորմեա»-ը և «Հայր մեր»-ը:

Պաշտամունքի քաղցրավոր երգեցողությանը իրենց մասնակցությունն են բերել նաև կաթողիկ, անգլիկան, բուդաբ և հույն շրթողորս եկեղեցիները իրենց երգչախմբերով:

Հայտնական ազդեցի արարողությունից հետո մասնակից բոլոր հոգևորականները ւաճառքին միջ դահլիճում միմյանց հետ ունեցել են սիրալիր ու եղբայրական հանդիպում, ուր շեշտվել է էկումենիկ մասն միջոցառումների նշանակությունն ու կաթողիկոսությունը բրիտանական եկեղեցիների հետ տաճա առավել սերտ գործակցության և ի Բրիտոս միության ճանապարհին:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄՈՐԱՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵՆԵՂԵՑՈՒՄ

Մոնրեալի ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու և նրան հարակից Ֆերմանտա Սենտ Ջայզ Յունայոդդ եկեղեցու նախաձեռնությամբ սույն թվի հունվարի 30-ին տեղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի է ունեցել միջեկեղեցական երեկոյան հսկումի արարողություն, որին մասնակցել են Ուսարմոն քաղաքի քրիստոնյա բոլոր համայնքների ներկայացուցիչները: Մոնրեալում առաջին անգամ լինելով, շուրջ տասներկու հոգևորականներ այդ օրը ներկայացրել են անգլիկան, ավետարանական, հոռմեական կաթողիկ և հայ առաքելական եկեղեցիները՝ իրենց հավատացյալներով և յուրահատուկ արարողություններով: Հսկումի արարողությանը ներկա է եղել մեծ մասամբ օտարներից քաղկացած հավատացյալների մի հոծ քաղմություն:

Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Ջավեն ծ. վրդ. Արզումանյանի և Յունայոդդ եկեղեցու հոգևոր հովիվ հայր Հերոյդ Թոմսոնի համատեղ ջանքերով կազմակերպված միջեկեղեցական սույն պաշտամունքի հայտադրի համաձայն, տարբեր եկեղեցիների հոգևորականներն ու դպիրները հաջորդաբար կատարել են աւորթներ, հոգևոր երգեր և ս. Գրոց ընթերցումներ անգլերեն, ֆրանսերեն և հայերեն լեզուներով:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Մամիկոն բն. Ոսկանյանը, հանուն առաջնորդական փոխանորդ հայր սուրբի, հանդես է եկել ամփոփ մի ուղերձով, որի մեջ նշել է, որ Մոնրեալի մեջ առաջին անգամ տեղի ունեցող էկումենիկ

սույն պաշտամունքը եկեղեցիների մերձեցման, փոխըմբռնման, նրանց միջև հաստատված եղբայրական կապերի ամրապնդման տեսակետից ունի կարևոր նշանակություն, և որ Հայաստանյայց եկեղեցուն հատկապես Սմեճայի Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի օրով և նախաձեռնությամբ, միշտ էլ եղել է հուանդուն ջանադրվել բոլոր եկեղեցիների՝ քրիստոնեաների և փոխադարձ հարգանքի վրա հաստատված անկաշկանդ գործակցության և քրիստոնյա հավատացյալների մեջ էկումենիկ ոգու զարգացման:

Կրոնաշունչ տպավորիչ ուղերձներով հանդես են եկել նաև հոռմեական կաթողիկ եկեղեցու ներկայացուցիչներ հայր ժ. Օ'Ռորկեն և հայր Անդրե Լեգոն:

Այնուհետև անմահ Կոմիտասի անունը կողմ ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դպրաց դասը քառամայն երգեցողությամբ և գեղարվեստական քարձր մակարդակով կատարել է «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ» և «Գովեա, երուսաղէմ, գՏէր» գմայլելի շարականները՝ խոր տպավորություն առաջացնելով օտար հաւարակության մեջ:

Հավարտ արարողության կատարված նվիրահավաքումը հատկացվել է Կանադական եկեղեցիների խորհրդին:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ավստրիայի եկեղեցիների էկումենիկ խորհուրդը սույն թվի հունվարի 24-ին Վիեննայի ռուսաց եկեղեցում կազմակերպել է էկումենիկ ոգով մի արարողություն բոլոր քրիստոնյաների միության համար:

Օրվա նշանաբանն է եղել. «Յուրաքանչյուր մարդ թող հավատա, որ Տերը Հիսուս Բրիստոսն է»:

Արարողությանը մասնակցել են ավետարանական, հոռմեական կաթողիկ, հից կաթողիկ, անգլիկան, հայ առաքելական, ռուս պրավոսլավ, հոռմական, ռումինական և սերբիական օրթոդոքս եկեղեցիների բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներ:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ռուս պրավոսլավ եկեղեցու եպիսկոպոս Գերման: Արարողության ընթացքում Վիեննայի ռուսական եկեղեցու երգչախումբը մեծ հանդիսավորությամբ մեջընդմեջ կատարել է շարականներ և կրոնական մեղեդիներ: Աղոթքներով և ս. Գրոց ընթերցվածներով հանդես են եկել տարբեր եկեղեցիների մի շարք հոգևորականներ, այդ թվում՝ Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և Ավստրիայի եկեղեցիների էկումենիկ խորհրդի ատենապետ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, որը կարդաղել է մի հատված Հովհաննու Ավետարանից:

Էկումենիկ ոգով տպավորիչ մի քարոզ է արտասանել բարեկարգյալ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ Իմրե Գունգեմ:

տեսչության, ուսուցչական կազմի և աշակերտության ջերմ ընդունելությամբ:

S. Ասողիկ եպիսկոպոսը, համուն դպրոցի ղեկավար մարմնի և աշակերտության,



Էկումենիկ պաշտամունքի Վիեննայում. Վիեննայի Հայոց հոգևոր հովիվ տ. Մուսուս ձ. վրդ. Գրիգորյանը արարողության պահին

Միջեկեղեցական սույն պաշտամունքը փակվել է եպիսկոպոսական օրհնությամբ և ներկա բոլոր հավատացյալների կողմից խմբովին կատարված գոհաբանական մի երգով:

Արարողության ավարտին կատարվել է նվիրահավաքում՝ կարիքավորներին օգնելու համար:

ԻՐԱՔԻ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՂԱԴԻ ՀԱՅՈՑ
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՎԱՐԺԱՐԱՆ

Իրաքի պապական նվիրակ ժամ Ռյուպ արքեպիսկոպոսը սույն թվի փետրվարի 18-ին, ընկերակցությամբ Իրաքի հայոց բարեջան առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի, հայ կաթողիկե վարդապետ տ. Անտոն Աղալյանի, թեմի քահանա հայրերի և ուսումնական խորհրդի անդամների, այցելել է Բաղդադի հայոց Ազգային միացյալ վարժարան, ուր արժանացել է վարժարանի

բարի գալուստ է մաղթում քարոհաստիճանի հյուրին՝ ներկայացնելով նրան որպես մեծ հայասեր և մտերիմ ու սիրելի բարեկամը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հոռմի եկեղեցու ներկայացուցիչը, հայերեն լեզվով դիմելով ներկաներին, արտասանել է հետևյալ խոսքերը. «Ես շատ երջանիկ եմ այս մեծ դպրոցին մեջ գտնվելու համար: Կմաղթեմ, որ միշտ կապված մնաք ձեր վառապանծ հայրենիքին և լեզվին»: Ապա սրբազան հյուրը շնորհակալություն է հայտնել իր նկատմամբ ցուցաբերված ջերմ զգացումների և սրտագին ընդունելության համար:

Դպրոցի աշակերտության կողմից, ի պատիվ մեծարգո հյուրի, գործադրվել է խնամքով պատրաստված գեղարվեստական մի ճոխ հայտադիր, որից հետո սրբազան հյուրը առաջնորդվել է տեսչարան, ուր տեղի է ունեցել հյուրասիրություն և սրտաբան գրույց ջերմ մեճոյսրտով:



Պապական նվիրակը և Իրաքի հայոց առաջնորդը Բաղդադի հայոց սպագային վաղձարանի ստեղծ

վերջում պապական նվիրակը իր օրհնությունը և ուվել Բաղդադի հայոց համայնքին, դպրոցի ուսուցչական կազմին և աշակերտությանը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԳԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱԾՐՋԱՆԸ ԲՈՒՂԱՐԱՆՑՈՒՄ

Սույն թվի փետրվարի 16—18-ը Սոֆիայում տեղի է ունեցել Խաղաղության համաշխարհային խորհրդի հերթական նստաշրջանը, որին մասնակցել են աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանած կրոնական և աշխարհական ներկայացուցիչներ:

Նստաշրջանի աշխատանքներին իրենց գործոն մասնակցությունը են բերել ուսույրավուհավ եկեղեցու պետ Ս. Պիմեն Պատրիարքը, բուլղարական օրթոդոքս եկեղեցու պետ Ս. Մաքսիմ Պատրիարքը, ղայտական եկեղեցու, բուդայական և իսլամական կրոնների բարձրաստիճան հոգևւոր ներկայացուցիչներ:

Սույն նստաշրջանը, մինչ այդ տեղի ունեցած մյուս նստաշրջանների հետ համեմատած, բնութագրվել է որպես ամենից հեղինակավորը ու արդյունավորը: Ընտրվել են Խաղաղության համաշխարհային մեր խորհուրդ և 100 հոգուց բաղկացած Կործադիր մարմին: Ժողովում միաձայնությամբ ընդունվել է խաղաղության ամրապնդման, ժողովուրդների անվտանգության

և միջազգային համագործակցության վերաբերյալ մի բանաձև:

Փետրվարի 18-ին Ս. Պիմեն և Ս. Մաքսիմ Պատրիարքները մասնակցել են Սոֆիայի ս. Նիկոլայ վանքում տեղի ունեցած համատեղ աղոթքի արարողությանը:

Փետրվարի 17-ին, բուլղարական օրթոդոքս եկեղեցու նախաձեռնությամբ, Սոֆիայի հոգևոր ակադեմիայի շենքում կազմակերպվել է հանդիպում Խաղաղության համաշխարհային խորհրդի նստաշրջանի աշխատանքներին մասնակցող կրոնական ներկայացուցիչների միջև: Հանդիպման ընթացքում քննարկվել են քրիստոնյաների և այլ կրոնների հետևող հոգևոր գործիչների՝ համաշխարհային խաղաղության ամրապնդման մեծ գործին բերելիք մասնակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

Սույն հանդիպմանը հրավիրված է եղել նաև բուլղարահայ թեմական խորհրդի տնտեսուպետ պրն. Օճնիկ Լևոնյանը, որը հանդիպման մասնակիցներին ներկայացրել է հայ եկեղեցին՝ կանգ առնելով հայ ժողովրդի խաղաղասիրության և ի մասնավորի՝ Վազգեն Առաքիցի Ամենայն Հայոց Հայրապետի՝ խաղաղության ամրապնդման ուղղությամբ գործադրած եռանդուն ջանքերի վրա:

Խաղաղության և ժողովուրդների համեմատելի գործակցության ի նպաստ ելույթներ են ունեցել նույնպես ընդունելությանը մասնակցած բազմաթիվ կրոնական ներկայացուցիչներ:

ԼՈՒՐԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄԻՍ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից 1974 թ. հունվար ամիսը հայտարարված է եղել որպես հատուկ աղոթքի ժամանակաշրջան քրիստոնյաների միության համար: Ժնևի կենտրոնի հաղորդման համաձայն, քողոքական և հոռմեական կաթոլիկ եկեղեցիները միասնաբար հայտարարել են անհրաժեշտությունն ու հնարավորությունը աղոթելու եկեղեցիների առավել մերձեցման և հուսալի միության համար:

..

Վատիկանի՝ Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ կարդինալ Ժան Վիլբրանդսը Հռոմի եկեղեցու և Ե. Հ. Խ.-ի հարաբերությունների ներկա վիճակի մասին արել է հետևյալ հայտարարությունը. «Մեր և Ե. Հ. Խ.-ի հարաբերությունները մեզ առաջնորդում են ավելի խոր և ջերմ հասկացողության, չնայած որ կաթոլիկ եկեղեցու որոշումը, դեռևս չմիացալու Ե. Հ. Խ.-ին, որոշ դժվարություններ է ստեղծում այս բնագավառում»: Վիլբրանդսը հայտարարել է նաև, որ Ե. Հ. Խ.-ի և կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներից բաղկացած խառնաձևերից խառն հանձնաժողովը կազմել է երեք տարվա համար իրագործելի աշխատանքի մի ծրագիր, որի առաջին հոդվածները լրիվ ընդունվել են աշխարհի խոշորագույն այս երկու կրոնական հաստատությունների ներկայացուցիչների կողմից:

Վիլբրանդսը շեշտել է, որ Ե. Հ. Խ.-ի 5-րդ համաժողովը, որը գումարվելու է Զակարտայում 1975 թվականին, «ունենալու է էկումենիկ առաջնակարգ մի հանգրվանի կարևորությունը» և որ, իբրև աղայիսի, գրադեցնելու է բոլոր քրիստոնյաներին՝ ներառյալ կաթոլիկ եկեղեցուն:

..

Իտալիայում հունվարի 27-ին շուրջ 3.000 ժողովական և կաթոլիկ հավատացյալներ մասնակցել են էկումենիկ մի արարողության, որը տեղի է ունեցել Տրենտի Մայր տաճարում, ուր ավելի քան չորս դար առաջ Տրենտի հայտնի ժողովը արտահայտել էր կաթոլիկ եկեղեցու բուռն հակազդեցությունը նորակազմ բարեկարգիչների դեմ:

Պաշտամունքի ընթացքում Իտալիայի, Իերմանիայի, Շվեյցարիայի և Ավստրիայի

ուսուրբեր քաղաքներից ժամանած 400 հոգևորականներ միմյանց հետ փոխանակել են «սիրո ողջույն»:

..

Բողոքական և կաթոլիկ եկեղեցիների նախաձեռնությամբ Միացյալ Նահանգներում ռադիոհաղորդման 400 կայաններ ձայնավորել են հատուկ ծրագրով կրոնական հաղորդում «Մատ մեզ կալ յաղօթս» բնաբանի շուրջ:

ԻՆՏԵՆՏԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՄԻԱՊՈՍՏՐՈՍԱՏՎՈՒՄ Ե Ե. Հ. Խ.-Ի 5-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ինդոնեզիայի եկեղեցիների խորհուրդը, որը 1975 թվականին Զակարտայում ընդունելու է Ե. Հ. Խ.-ի 5-րդ համաժողովի պատվիրակներին, այժմյանից ձեռնամուխ է եղել համաժողովի նախապատրաստման աշխատանքներին և արդեն իսկ կազմել է 50 անդամներից բաղկացած տեղական մի մարմին, որպես գործադիր հանձնաժողով՝ գլխավորությամբ դոկտ. Տ. Բ. Սիմատուպանգի, որը նախագահն է Ինդոնեզիայի եկեղեցիների խորհրդի և միաժամանակ անդամ՝ Ե. Հ. Խ.-ի կենտրոնական և գործադիր կոմիտեների:

Կազմակերպիչ հանձնաժողովը ընդգրկում է ութ քաժիկներ, որոնք կազմակերպելու են համաժողովը իր տեղական, մշակութային, էկումենիկ, տնտեսական, առողջապահական և այլ բնագավառների ընդունմամբ ու պատրաստությամբ:

Համաժողովը անցկացվելու է «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում» ընդհանուր թեմայով: Ներկայումս Ժնևում մշակվող աշխատանքային փաստաթղթերը, թարգմանված եվրոպական մի շարք լեզուներով, շուտով դրվելու են 267 անդամ եկեղեցիների տրամադրության տակ, որպեսզի լուրջաբանչյուր եկեղեցի, նախքան համաժողովին մասնակցելը, հանգամանորեն ուսումնասիրի դրանք:

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵՎ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ֆրանսիայի Էլզաս-Լոթարինգիա քաղաքի ժողովական և հոռմեական կաթոլիկ հավատացյալներից վերջերս թույլատրվել է փոխադարձաբար սուրբ հաղորդություն ստանալ քույր եկեղեցիներում: Այս ան-

ճախընթաց արտոնությունը իրագործվել է Ստրասբուրգի կաթոլիկ եպիսկոպոս Լևոն Աթոյուր Էկեղեցիի կողմից, որը դեռևս մեկ տարի առաջ ընձեռն էր նրկու կրոնական համամարմնների միջև տեղի ունեցած խառն ամուսնությունների հետևանքով առաջացած կապությունը, որը վերոհիշյալ տեղական եկեղեցիները դնում էր լուսման մի որոշում ընդունելու ամբողջատնությունում առաջ: 1978 թվականի ինկուկներին Էդաս-Լո-

1973 թվականի դեկտեմբերին ՀՀԿԿ-ն
թաթիկագիայի լուծերական եկեղեցին իր 240
հազար հալատացյալներով ընդունել է կա-
թոլիկ եպիսկոպոսի առաջարկը փոխադարձ
հաղորդություն մատակարարելու հարցում:
Նույն քաղաքի քարեկարգչալ եկեղեցիների
սինդոդը ևս գոհունակությամբ է ընդունել
կաթոլիկ եպիսկոպոսի այս ձախաձեռնու-
թյունը:

Սույն քայլը, սակայն, առնվել է այն հատուկ աշտանակով, որ փոխադարձ հաղորդությունը հավատացյալներից չհեռացնի իրենց պատկան հեղեղներից, այլ, ընդհակառակը, առիթ հանդիսանա, որ նրանք, հավատարիմ մնալով իրենց դավանանքին, միաժամանակ խորացնեն իրենց հավատը և եկույնեցիկ պարտավորության գիտակցությունը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿ ԵՎ ԱՆԳՂԻԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԵՐՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս Պողոս Զ Պապի և Քեմթրերիի արքեպիսկոպոս Մայքլ Ռեմգիի կողմից համատեղ մի հաղորդագրություն և հրապարակվել այն մասին, որ անգլիկացի և կաթոլիկ եկեղեցիների միջև գոյացել է նախնական մի համաձայնություն՝ հոգևոր մատակարարության և պաշտամունքի վարդապետությանը վերաբերյալ։ Սույն համաձայնագիրը ենթակա է լինելու հարատև ուսումնասիրության։

Նրանք մի մերձեցում անհրաժեշտ հախապայուման է հասնարվել երկու եկեղեցիների պաշտամունքի և խորհրդակատարությանը հետագա փոխադարձ մանայնման համար: Ներկայումս Աշված համաձայնությունը թեև անհամահասկվելով է երկու եկեղեցիների կողմից կազմված միացյալ մի հանձնախմբի իրավասության շրջանակում միայն ու դեռևս չի ներկայացնում մրանց ամբողջական մարմինները, սակայն երկու կողմերին է հավասարապես քաջակերում է ձեռնամուխ լինելու հետագա ամելի խոր ուսումնասիրությունների:

Հալոորդագրությունը քաղկացած է երեք
բաժնից.

ա) Հոգևոր մատակարարություններ եկեղեցու կյանքից ներս.

բ) Զեռնադրյալ կարգերի մատուցած մատակարարություններ.

գ) Առաջին երկուսի հարաբերությունները:

ՀԱՌԿԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ
ԾԵՄԱՐԱՆՆԵՐԸ

Հնդկաստանի Բանգալոր քաղաքում բողոքական, հոռոմեական կաթոլիկ և ուղղափառ հոգևոր ճեմարանների ներկայացուցիչների միջև վերջերս տեղի է ունեցել խորհրդակցական մի հանդիպում, ուր որոշվել է կազմել քրիստոնյա աստվածաբանական հաստատությունների միացյալ մի մարմին: «Նման մի ձեռնարկում,—նշել է Բանգալորի միացյալ աստվածաբանական ճեմարանի տեսուչ դոկտ. Ռասըլ Չանդրան,—կարող է առաջին քայլը համարվել ընդհանուր աստվածաբանական մի համալսարանի հաստատման ճանապարհին»:

Արդեն իսկ կազմվել է ատժամյա մի հանձնախումբ՝ ուսումնասիրելու համար վերոհիշյալ ծրագրի իրականացման մնարավորությունները, մշակելու մի մախագիծ և այն ներկայացնելու համապատասխան եկեղեցական իշխանությունաց ու ստանալու ներանց հավանությունը:

ՄԵԾԱԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՈՒՄ Ե. Հ. Խ.-ի
ԿՈՂՄԻՑ ԱՖՐԻԿԱՅԻ ՍՈՎՅԱԼԵՆԵՐԻ
ԹԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սույն թվի փետրվար ամսին Ե. Հ. Խ--ի կենտրոնից հրապարակված մի հաղորդման համաձայն, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը որոշել է ձեռնարկել մեկուկես միլիոն դոլլարի լրացուցիչ մի հանգանակության՝ օգնելու համար Աֆրիկայում տառապող բազմահազար սովյալների, որոնք ընկալվում են Սահելյան գոտու շրջանում, Ատլանտյանից մինչև Կարմիր ծով։

Նախապես կատարված հանգամանկություններից մեկ միլիոն դոլլար արդեն հատկացվել է Սահելի և Եթովպիայի կարոտայաներին: Ե. Հ. Խ.-ի համար այժմ անհետամզելի անհրաժեշտություն է դարձել օգնության հասնել Սուդանի, Ջենիայի, Ալժիրի, Նիգերիայի և այլ շրջանների բնակիչներին, որոնց կյանքը լուրջ վտանգի ենթակա է այդ շրջաններում տիրող երաշտի հետևանքով:

Ե. Հ. Խ.-ի մախաձեռնությունը հատուկ ծրագրեր են մշակվել սնունդ մատակարարելու Եթովպիայի սովյալներից և որդեգրելու որրացած բազմաթիվ երեխաների: Նույնպիսի ծրագրեր այժմ գործադրվում են նաև Սուդանում և Հենիյաում:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ԳԱՀԱԿԱԼԸ

Հունաստանի օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոսաց Սինդոդ սույն թվականի հունվարի 12-ին Աթենքի արքեպիսկոպոս է ընտրել Յանինայի միտրոպոլիտ Սերաֆիմ եպիսկոպոսին: Նրա ընտրությունը վավերացվել է Հունաստանի Հանրապետության նախագահ Ֆեդոն Գիզիկիսի կողմից: Գահակալության հանդիսությունը տեղի է ունեցել Աթենքի Մայր տաճարում:

Հունաստանի օրթոդոքս եկեղեցու հոր գահակալը հաջորդում է Աթենքի նախկին արքեպիսկոպոս Հերոնիմոսին, որը անցած տարվա դեկտեմբերի 15-ին հրաժարվել էր հունական եկեղեցու գլխավորի իր պաշտոնից՝ եկեղեցական և քաղաքական շրջանակների կողմից իր դեմ ուղղված բռնականացումներից պատճառով, որոնք, ըստ նրան, «ծանր հարված էին հասցնում եկեղեցու վարկին և հեղինակությանը»:

Կառավարական հրամանագրով հունական եկեղեցու նվիրապետության 88 միտրոպոլիտներից 34-ին, որոնք 1987 թվականին մասնակցել էին Հերոնիմոս արքեպիսկոպոսի ընտրությանը, և որոնք, կանոնական իրավունքով սահմանված կարգին հակառակ, նշանակվել էին նրա կողմից, չի թույլատրվել մասնակցել Հունաստանի եկեղեցու հոր գահակալի ընտրությանը: Այսպիսով, ընտրությանը մասնակցած 28 եպիսկոպոսներից 20-ը իրենց ձայնը տվել են Յանինայի միտրոպոլիտին:

Սերաֆիմ արքեպիսկոպոսը ծնվել է 1913 թ. կենտրոնական Հունաստանի Կարդիգա գյուղում: Աթենքի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետն ավարտելուց հետո, 1938 թ. ստացել է սարկավագության աստիճան, ապա 1942 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Հունաստանում գերմանական զբաղման տարիներին մասնակցել է դիմադրական շարժմանը: 1942 թվականից մինչև 1949 թվականը եղել է Հունաստանի օրթոդոքս եկեղեցու ս. Սինդոդի քարտուղարը: 1949 թ. նշանակվել է Արտայի և ապա, 1958 թ. Յանինայի միտրոպոլիտ: Իր հոգևոր ծառայության զուգընթաց ծավալել է մարդասիրական լայն գործունեություն և եղել է հասարակական քրեությանի քաղաքային կազմակերպությունների նախագահ:

Հունաստանի եկեղեցու հոր գահակալի վրա այժմ ծանրանում է իր եկեղեցու եպիսկոպոսներից միացնելու և մասնավորապես եկեղեցական կանոնադրությունը վերանաշելու դժվարին աշխատանքը. նա պետք է աշխատի եկեղեցու կանոնադրությունը վերափոխել այնպես, որ կարողանա միաժա-

մանակ քավարարել թե՛ պետությանը և թե՛ իր եկեղեցու նվիրապետությանը, որի անդամների մեծ մասը այն կարծիքին է, թե կառավարությունը շատ է միջամտում եկեղեցու գործերին:

Սերաֆիմ արքեպիսկոպոսի ընտրությունն ու գահակալությունը խոր գոհունակությամբ է ընդունվել Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքության կողմից, որը Հունաստանի եկեղեցու հոգևոր պետին նկատում է որպես «տիեզերական պատրիարքության ջերմ բարեկամ և բարի կամքի տեր մի անձնավորություն»:

ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԸ

Պրոֆ. Տոդոր Սաբել Սոֆիայի օրթոդոքս աստվածաբանական ճեմարանի գլխավոր դասախոսներից է և միաժամանակ անդամ է. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի: Պրոֆ. Սաբելի հաղորդման համաձայն, Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցին դարձել է շարունակ նշանակալից դեր է կատարել երկրի մշակութային կյանքի զարգացման և ազգային արժեքների անադարտ պահպանման գործում: Վերջին տասը տարիների ընթացքում բուլղարական եկեղեցին իր գործում մասնակցություն է քերել թե՛ համաշխարհային խաղաղության պաշտպանության գործին և թե՛ էկումենիկ շարժմանը՝ որպես Հ. Հ. Խ.-ի անդամ:

Բուլղարիայում ապրող մոտ 8 միլիոն քրիստոնյաների մեջ այսօր կան 11 օրթոդոքս թեմեր և երկու այլ թեմեր էլ՝ արտասահմանում, մեկը Հյուսիսային Ամերիկայում, մյուսը՝ Ավստրալիայում՝ 12 միտրոպոլիտներով, 10 եպիսկոպոսներով, 4.500 քահանաներով և 400 վանականներով: Ամբողջ Բուլղարիայում կան 3.700 եկեղեցիներ և մատուռներ, ինչպես նաև 120 վանքեր:

Բուլղարական օրթոդոքս եկեղեցին ունի երկու կրոնական՝ հոգևոր և աստվածաբանական ուսումնական հաստատություններ՝ 320 ուսանողներով և հրատարակչական հատուկ կենտրոնով:

Բուլղարիայի մեծագույն համայնքը, օրթոդոքս եկեղեցուց հետո, հռոմեական կաթոլիկ համայնքն է՝ 50 հազար հավատացյալներով և 40 քահանաներով: Կան նաև մուսուլման թվով բողոքական այլևայլ հարանվանությունների հետևող քրիստոնյաներ:

Ե. Հ. Խ.-Ի ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՉԼԻՈՒՄ

Մինչ հինգ հազար օտարերկրացի ապաստանյալներ Չիլիում անձկությամբ

սպասում են երկրից հեռանալու համար, մարդկանց ուշադրությունն այժմ քիչով է Զիլիում մարդու իրավունքների պաշտպանության հարցի վրա: Պետական հեղաշրջումից ի վեր հազարավոր մարդիկ ենտված են բանտերը: Միայն Սանտյագոյում ավելի քան 200.000 հոգի կորցրել են իրենց աշխատանքը քաղաքական և տնտեսական պատճառներով:

Զիլի ուղարկված Ե. Հ. Խ.-ի ներկայացուցիչների հրապարակած հաղորդումների համաձայն, Զիլիում ամենակույտի կերպով ունենալով են մարդու իրավունքները, և երկիրը գտնվում է ծանր տագնապի սպառնալիքի տակ: Բացի այդ, ամառը-կայից խոշտանգումների են ենթարկվում իշխող ռեժիմին հակադրվելու մեջ մեղադրվող հազարավոր անմեղ մարդիկ:

Ե. Հ. Խ.-ի կողմից վերջերս մի կոչ է ուղղվել բոլոր անհամ եկեղեցիներին, որպեսզի 1.200.000 դոլլարի մի հանգանակություն ձեռնարկվի 1974 թվականի համար: Այդ գումարի կեսը հատկացվելու է այն կոմիտեին, որը ներկայումս աշխատում է Զիլիում ի նպաստ խաղաղության վերահաստատման, և որն ստեղծվել է Զիլիի բողոքական, կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների կողմից: Սանտյագոյի կաթոլիկ եպիսկոպոս Ֆերնանդո Արիզտայի և լուսերական եկեղեցու եպիսկոպոս Հելմուտ Ֆրենցի նախագահության ցերքը: Այս կոմիտեի նպատակն է օժանդակել զոհվածների ընտանիքներին, ապահովել ձերբակալված անձանց դատական պաշտպանությունը և օգնել բոլոր նրանց, ովքեր կորցրել են իրենց աշխատանքը:

Նախատեսված գումարի մնացած մասը տրամադրվելու է կատիմական Ամերիկայի մի շարք երկրներում հաստատված ընդունման այն կենտրոններին, որոնք օգնում են չիլիացի ապաստանյալներին՝ բնակության վերջնական հանգրվան գտնելու համար: Ներկայումս 4.500-ի է հասնում թիվը այն ապաստանյալների, որոնք ժամանակավորապես ապաստան են գտել Արգենտինայում, Կոստա-Ռիկայում, Հոնդուրասում, Էկվադորում և Պանամայում:

ՀԱՆՐԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԵՎ
ԵՎՐՈՊԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՈՐԶՐԴԻ
ՆԵՐԿԱՑԱՑՈՒԹՅՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սույն թվի փետրվարի 8—7-ը Եվրոպիայում (Եվրոպայի) տեղի է ունեցել Ե. Հ. Խ.-ից աղըթեր Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի (Ե. Ե. Կ.) և հոռմական կաթոլիկ եկեղեցու աղըթեր Եվրոպայի ե-

պիսկոպոսական կոնֆերանսի խորհրդի (Ե. Ե. Կ. Խ.) ներկայացուցիչների երրորդ հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցել են Ե. Ե. Կ. Խ.-ի կողմից՝ Մարսելի արքեպիսկոպոս Ռոմեն Էնգարայը, Կոպենհագենի եպիսկոպոս Հանս Մարտենսը, Կուրայի եպիսկոպոս Իոհաննես Վոնդերայը և Ե. Ե. Կ. Խ.-ի գլխավոր քարտուղար մոնսեյոր Ալոիս Սուստարը: Ե. Ե. Կ.-ի կողմից՝ Լոնդոնի վիլմ (ճախագահ), Տալլինի և Լատոնիայի միտրոպոլիտ Ալեքսիս և Ե. Ե. Կ.-ի գլխավոր քարտուղար Գլեն Գարֆիլդ Վիլյամսը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են վերոհիշյալ եվրոպական երկու կազմակերպությունների հնարավոր գործակցության հետ առնչվող մի շարք հարցեր: Ժողովում հաղորդում է տրվել Ե. Ե. Կ.-ի և Ե. Ե. Կ. Խ.-ի անցած տարեշրջանում կատարված աշխատանքների մասին:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ
ՆՈՐԶՐԴԻ (Ե. Հ. Խ.) ԵՎ
ՆԱԿԱՐԴՈՒՄՆԱՆ

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
(Խ. Հ. Կ.) ՆԵՐԿԱՑԱՑՈՒԹՅՆԵՐԻ
ՀԱՆՐԻՊՈՒՄԸ ԺՆԵՎՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 28-ից մարտի 1-ը Ժնևում տեղի է ունեցել հանդիպում Ե. Հ. Խ.-ի և Խ. Հ. Կ.-ի ներկայացուցիչների միջև՝ գլխավորությամբ երկու կազմակերպությունների գլխավոր քարտուղարներին:

Միության, խաղաղության, արդարության և ազատության հարցերի շուրջ ծավալված աստվածաբանական աշխույժ քննարկման հանդիպման մասնակիցներին հանգեցրել է այն խոր ըմբռնմանը, որ եկեղեցիները իրենց գործունեությունը պետք է ծառայեցնեն խաղաղության գործին:

Հատուկ ուշադրություն է նվիրվել այն ուղիներին, որոնց միջոցով այդ երկու կազմակերպությունները կկարողանան համագործակցել տարբեր բնագավառներում: Այդ բնագավառներն են՝ ՄԱԿ-ի գործունեության պաշտպանությունը ազգային մակարդակով, մարդու իրավունքների պաշտպանության հարցը և սպառազինությունների մրցավազքի ու ռասիզմի դեմ մղվող պայքարը:

Հանդիպման ընթացքում եղել են գործնական առաջարկություններ երկու կազմակերպությունների միջև հետագայում համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ: Խ. Հ. Կ.-ի ներկայացուցիչները ցանկություն են հայտնել միմյանց միջև կապած բանավեճը շարունակելու հաջորդ տարի:



ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱՆԻՆ» ԱՄՍԱԳՐԻ* (1944—1973)

8929. ՏԵՐ-ՂԵՎՈՆԳՅԱՆ Հ[ԱՅԿ]:—Հայկական արձարագործության գոհարը: [Ուր. դարի «Մոտա-կերպ» Ս. Նշան» մասնատուփի մասին]: 1964, օգոստ.-սեպտ., էջ 28—34:

Յոթ լուսանկար մասնատուփի տարբեր մասերից: **8930. ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԳԱՊԵՏ:**—Մեծագործ է հայրենասեր հայրապետը: [Գետիգ Զ-ի մասին]: 1964, մայիս, էջ 97—44:

Նկ.՝ 1916 թվականին Պետերբուրգում կայացած արգելիչ-եկեղեցական համագումարին մասնակցող Ռոզենտրականցերը Գետիգ վարդապետ Զորեքչյանի գլխավորությամբ:

8931. [ՏԵՐՏԵՐՅԱՆ ԵՂԵՆ ՊԵՏՐՈՐԱՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ]:—Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա և Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսների պատմական ողջագործումը: [Խմբագրականը «Սիոնի» 1983 հոկտեմբեր-դեկտեմբեր]: 1984, հունիս, էջ 10—12:

8932. ԶՅՈՒՐՅԱՆ Հ[ԱՐՈՒԹՅՈՒՆ]:—Պատմական երկու ճշտումներ: 1. Սուղումամաստերի Ս. Աստվածածին եկեղեցին:—2. Հայերեն հմագույն ձեռագիր ավետարան մը (968 թ.): 1964, ապրիլ, էջ 34—35:

8933. [ԶՈՒՆՋՅԱՆ ՍՈՒՐԵՆ]:—Համգիտ Հ. Նեյսեան վարդապետ Ուկինյանի: (1883—1888): [Մահախոսական-կիսագրական]: 1964, հունվար, էջ 58—59:

Ներսես վարդապետ Ակինյանի դիմակարու: **8934. ԶՈՒՆՋՅԱՆ Ս[ՈՒՐԵՆ]:**—Պրոֆ.-դոկտ. Վլադ Բրնցեանուն և Որա հայագիտական աշխատությունները: 1964, հունիս, էջ 51—58:

Նույն տեղում: [Իրավատար մատենագիտություն պրոֆ. Վլադ Բրնցեանունի հայագիտական աշխատությունների]: էջ 55—58:

8935. ԶՈՒՆՋՅԱՆ ՍՈՒՐԵՆ:—Տրանսիլվանիայի հայերի պայքարը պազային ինքնուրույնության պահպանման համար: (Ժե դարի վերջին միջև և դարի սկիզբը): 1964, դեկտ., էջ 37—44, 1965, հունվար, էջ 48—55, 1966, փետրվար, էջ 28—37, մարտ, էջ 45—50, ապրիլ, էջ 51—54, մայիս, էջ 54—60, հունիս, էջ 58—60, հուլիս, էջ 42—47:

Բովանդ.՝ 1. Այդպի հայ կաթողիկ թեմը իբրև կա-

թողիկության տարածման հեռակետ Մոլդովայի և Տրանսիլվանիայի հայերի մոտ:—2. Տրանսիլվանիայի հայերին դավանափոխ անելու առաջին շրջանը (1884—1890 թթ.) և ավանդապահ հայերի պայքարը:—3. Մոլդովայի հայերին ևս դավանափոխ անելու փորձերը և ճրանց ձախողումը:—4. Տրանսիլվանիայի կաթողիկոսական հայերի մի մասի վերադարձը հայ եկեղեցու դիրքը (1890 թ.):—5. Տրանսիլվանիայի հայ ավանդապահների պայքարը լատինամոլության դեմ (1892—1927 թթ.):—6. Տրանսիլվանիայի «Ազնագանդ» հայերի բռնի կաթողիկոսացումը (1911 թ.):—7. Տրանսիլվանիայի հայերի երկդարյա պայքարը հայաձեռն ազգային եպիսկոպոսության վերականգնման համար: (1715—1890 թթ.):

8936. ՓՐԿԶԻ հրաշափառ և սուրբ Հարության տոհմի առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս ճորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և ճյուղապետական աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հետագրերն ու գրությունները: 1964, մայիս, էջ 18—21:

8937. ՓՐԿԶԻ հրաշափառ և Սուրբ Հարության տոհմի առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս ճորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և ճյուղ եկեղեցիների հոգեվոր պետերի միջև փոխանակված ողջույնի հետագրերն ու գրությունները: 1964, մայիս, էջ 18—17:

8938. ՓՐԿԶԻ հրաշափառ և Սուրբ Հարության տոհմի առթիվ հայրապետական սուրբ պատարագ և ուրուգ Մայր Տաճարում: 1964, ապրիլ, էջ 10—12:

8939. ՓՐԿԶԻ հրաշափառ և սուրբ ճննդյան տոհմի առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս ճորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և ճյուղ եկեղեցիների հոգեվոր պետերի միջև փոխանակված ողջույնի հետագրերն ու գրությունները: [Առաջված հետագրերի թուղակը, փոխադարձ ընդունած հետագրերի բնագրերը]: 1964, փետրվար-մարտ, էջ 11—18:

8940. ՓՐԿԶԻ հրաշափառ և սուրբ ճննդյան տոհմի առթիվ հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և ճարուգ Մայր Տաճարում: 1964, փետրվար-մարտ, էջ 23—26:

1965

8941. ԱՐԱՆԱՄՅԱՆ ՀԱՅԱՍՏՈՒՆ ԱՐԶԵՊԻՍ-ԿՈՊՈՍ:—Ի գահակալության տաճարակալի Տեսոն Տեսոն Վազգենի առաջնու Հայրապետին Ամենայն Հայոց: [Բանաստեղծություն]: 1965, մայիս-դեկտ., էջ 84:

8942. ԱՋԵԱՎՈՒՐՅԱՆ ԳՈՂԱՐ:—Ամհայտ էջեր հայ ճահատակների գրական ժառանգությունից: [Բնագրեր: Ծանոթագրություններ]: 1965, փետրվար-մարտ-ապրիլ, էջ 43—57:

Բովանդ.՝ 1. Կոմիտաս վարդապետից Արշակ Զոպանյանին:—2. Ազգին վիճակը: Կոմիտաս վարդապետ:—3. Գրիգոր Զոհրապից Արշակ Զոպանյանին:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի №18 7-ժԱ-ից և 1974 թվականի №18 11-4-ից:

մին:—4. Դամիյն Վարուժանից Հ. Արիստակես Զազանությունից:—5. Դամիյն Վարուժանից «Ազգային» խմբագրություն:—6. Սիամանույից Նազենի և Զապկ Յարճանյաններից:—7. Սիամանույից Նազենի Յարճանյանից:—8. Սիամանույից Նազենի Յարճանյանից:—9. Սիամանույից Նազենի Յարճանյանից:—10. Թյակտիցցուց Արշակ Զոպանյանից:—11. Ռուբեն Զարդարյանից Արշակ Զոպանյանից:—12. Ռուբեն Զարդարյանից Զապկ Նապանյանից:—13. Արտաշես Հարությունյանից Արշակ Զոպանյանից:—14. Արտաշես Հարությունյանից Զապկ Նապանյանից:—15. Երկու բանաստեղծություն Ռուբեն Սևակից: Աստղի մը:—Ճամիկո՞րդ...:

8943. ԱՄԱՆՈՐԸ Հոգևոր ճեմարանում: [Հանդիսություն]: 1965, հունվար, էջ 28—30:

8944. ԱՄԱՆՈՐԻ առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն

մուտքում):—Ավետիք Խաճախյանի արձանը: [Ալեքսանդրի և Խաճախյանի փառաբանության ամփոփում: «Կործ» լատիներենով: 11. Կաղապարայանի):—Պեղարան Արմեն Արմենյանի ժամը:—Սպորտային ճորդարին:—Նոր գործարան Սևանում:—Սևանի երկաթուղին: [Երևան—Սևան էլեկտրական երկաթուղի միջև լինել]:

8971. ԼՈՒԻՐԵՐ մայր հայրենիքից: 1885, ճուլմար, էջ 48—52:

Բովանդ.՝ Սովետական Հայաստանի տնտեսական հարաբերությունները:—Հովհաննես Գրախանյանի երտնությունը «Հայոց պատմության» նոր հրատարակությունը: [Թրիխիսիում, վրաստանի Գիտ. ակադ. ի հրատարակությունը. հայերեն, վրացերեն լեզուներով]:—Աշխատությունը Գլխավոր Հրիմի հայ գաղութի պատմությանը: [Վ. Միքայելյանի «Հրիմի հայ գաղութի պատմությունը» աշխատության մասին]:—Ներսիսյանցիների հավաքը: [Թրիխիսի Ներսիսյանցի հայկական դպրոցի հիմնադրությունը 140-ամյակի առթիվ]:—Ենիմակի թատրոնի 100-ամյակը:—Ամիտաս վարդապետի Գլխավոր ցուցահանդեսը: [Երևանում, Նկարիչների տանը]:—Պանիկ վարդապետի ձեռագիր տետրը: [Վիդիատվությունը Երևանի Արվեստի թանգարանին Հ. Սիրունու կողմից]:—Խորհրդակցություն Գլխավոր գիտության պատմությանը:—Երևանի պատմության թանգարանը:—Երևանի ջերմաէլեկտրակայանում:—Արտաբաժանյան տուրիզմի զարգացումը:—Սփյուռքահայ տաղանդավոր արվեստագետներ հայրենիքում:—Տաղանդավոր մանուկ: [12-ամյա դաշնակահար Ջոհրայա Փարսևանյան]:

8972. ԼՈՒԻՐԵՐ մայր հայրենիքից: 1885, ճուլմար, էջ 88—89:

Մատենադարանի ձեռագրերի ցուցակը: [Եմուցյան ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի]: Առաջին հատորի լույս ընծայման մասին]:—Մատենադարանի նոր գրադարանը:—Պանիկ վարդապետի «Համակարգ»: [Հրատարակման մասին]:—«Երևանում» սպորտ ընկերության նոր դարձիցը:—Հանդիսավոր հիտո: Գլխավոր Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին:—Հայ նկարիչների ու քանդակագործների տարեկան ցուցահանդեսը:—Թանգարան Գառնիում:—Երաժշտական կամուրջը Երևանում:—Հայաստանի առաջին պետական մրցանակակիրները:—Միքայել Նալբանդյանի արձանի բացումը:—Գերմաներեն-հայերեն բառարան:—Հետաքրքրական թվեր Հայաստանի արդյունաբերության զարգացման մասին:

8973. ԽԱՆԱԶԱՆ ԳՐԻԳՈՐՆԻ. Ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկիում: 1885, օգոստ.-սեպտ., էջ 86—71:

8974. ԽԱՆԱԶԱՆ ԳՐԻԳՈՐՆԻ. Կոմիտաս վարդապետը: [Վերատպություն: Գրքի նկարիչ՝ Գ. Խանջյանի]: 1885, մայիս-հունիս-հունիս, հերթիկ 188-րդ էջից հետո:

8975. ԽԱՆԱԶԱՆ ԳՐԻԳՈՐՆԻ. Կոմիտաս վարդապետի խելագարության պատմությունը: [Վերատպություն: Գ. Սևանի «Անկողնի զանգակատուն» գրքի նկարագրողությունից]: 1885, փետրվար-մարտ-ապրիլ, հերթիկ 85-րդ էջից հետո:

8976. ԿՈՒՆԱԶԱՆ ԱՐԲՈՒՆ. Փառք պարտվածներին: [Եղևոնի 50-ամյակի առթիվ]: 1885, փետրվար-մարտ-ապրիլ, էջ 127—128:

Նկ.՝ Գաղթականներ: 8977. ԿՈՍՏԱՆՑԱՆ Ա.:—Ռուսներն Ջարդարան:

[Կյանքի, գրական գործունեության մասին]: 1885, փետրվար-մարտ-ապրիլ, էջ 188—189:

8978. 1885 ԹՎԱԿԱՆԻ հոկտեմբերի 81-ից նոյեմբերի 8-ը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի զանակարության 10-րդ տարեդարձի հանդիսություններին մասնակցող հրավիրյալների և հյուրերի ցուցակը: 1885, նոյեմբ.-դեկտ., էջ 88—88:

Բովանդ.՝ Ներքին բնակիչը:—Արտաամուսնի:—Հյուր հաղորդակցություն:

8979. ՀԱՄԼԱՆՆԵՐ. «Հավատը քո կեցությանը»:

[Եղևոնի 50-ամյակի առթիվ]: 1885, փետրվար-մարտ-ապրիլ, էջ 40—42:

8980. ՀԱՅԱՍՏԱՆԻՄ Սովետական կարգերի հաստատման քառասունհինգամյակին Գլխավոր հանդիսություններ Մայր Աթոռում: 1885, ճուլմար, էջ 81:

8981. ՀԱՅԱՍՏԱՆԻՄ Սովետական կարգերի հաստատման քառասունհինգերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական ամենավարդապետների միջև փոխանակված հեռագրերը: 1885, նոյեմ.-դեկտ., էջ 3—4:

8982. ՀԱՅԱՍՏԱՆԻՄ Սովետական կարգերի հաստատման քառասունհինգերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական ամենավարդապետների միջև փոխանակված հեռագրերը: 1885, նոյեմ.-դեկտ., էջ 3—4:

